

# Կոնֆլիկտների տրանսֆորմացիա. գաղափարների պատմություն

Գևորգ Տեր-Գաբրիելյան

Հունիսի 20, 2018թ.

## Տեսանկյուն

Հրատարակված՝ հոկտեմբերի 16, 2018

Պատրաստված՝ [Եվրասիա համագործակցություն հիմնադրամի](#) կողմից

**Բանալի բառեր.** Կոնֆլիկտ, կոնֆլիկտաբանություն, կոնֆլիկտների տրանսֆորմացիա, կոնֆլիկտի կառավարում, կոնֆլիկտների լուծում, կոնֆլիկտների կանխարգելում, խաղաղապահություն, հակամարտություն, պարադիգմ (հարաշար), իշխանություն, գաղափարախոսություն, քաղաքացիական հասարակություն, ոչ կառավարական կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ, պատերազմ, խաղաղություն, Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ, Արցախ, բռնություն, սպանություն, զարգացում, արժեք, ազգ, դեմոկրատիա, ժողովրդավարություն

**Գևորգ Տեր-Գաբրիելյան (ԳՏԳ)** – Բարև ձեզ: Ի՞նչ ասեմ. շնորհավոր մեր երկրորդ սեսիայի սկիզբը: Շնորհակալություն, որ եկել եք: Մեծ պատիվ է մեզ համար, որ դուք մեզ հետ եք այսօր: Իմ անունն է Գևորգ և ես ձեզ հետ հիմա պիտի հաջորդ սեսիան վարեմ: Ինչո՞ւ է սա նկարահանվում. որովհետև, ձեզանից ոմանք արդեն գիտեն, մենք անում ենք Jam Session<sup>1</sup>-ներ, որովհետև դուք «ընտրյալ» եք. հարյուր քանի հոգուց ձեզ ենք ընտրել. որ էն մյուսները անմասն չմնան, ինչպես նաև այլ մարդիկ, որոնք չէին դիմել մեզ, բայց գուցե կուզենան նայել մեր թողարկումները (անում ենք նկարահանում): Ինչպես նաև ձեզ համար էլ կարևոր կլինի մեր այլ թողարկումները՝ տեսագրությունը կամ սղագրությունը նայել, կարդալ, ծանոթանալ, և ես էլ որոշ հղումներ կանեմ իմ խոսքի մեջ դեպի մեր այլ թողարկումները:

Եվ մենք հետո սա նկարահանած, ինչ-որ պահի սղագրած էլի լույս կընծայենք, որպես Jam Session: Եվ էդ սղագրությունը ինչո՞վ է տարբերվում բուն նկարահանումից. որ այնտեղ շատ ավելի շատ են և՛ հղումները, և՛ ավելի բացատրած են մանրամասն որոշ կետեր: Էնպես որ, չնայած դա շատ ավելի ժամանակ է պահանջում, բայց ես ձեզ խորհուրդ եմ տալիս օգտվել մեր Jam Session-ների շարքից, մանավանդ որ մեր առավոտյան խոսակցության մի շատ կարևոր մասը մենք բազմիցս քննարկել ենք մեր Jam Session-ներում, և կա դա նկարահանված և սղագրված և հղումներով գիտության վերաբերյալ, «հայու գեն»-ի վերաբերյալ<sup>2</sup>, էթնոսի վերաբերյալ, էթնոսի կառուցումը՝ սոցիալական, երևակայումը ազգի՝ «ազգ» հասկացության<sup>3</sup>, և այլն:

<sup>1</sup> Ձեմ Սեշն թողարկումների շարք՝ <http://am.epfarmeria.am/am/thought-leadership/videos/jam-session-video-series/>

<sup>2</sup> Կոնֆլիկտների տրանսֆորմացիա. ներածական դասախոսություն (Jam Session 30)՝ <http://am.epfarmeria.am/conflict-transformation-introduction/>

<sup>3</sup> Երևակայական հանրույթներ, ռասիզմ, ազգայնականություն և կոնստրուկտիվիզմ (Jam Session 12)՝ <http://am.epfarmeria.am/imagined-communities/>

Երբ ես լսում էի ձեր խոսակցությունը՝ ես հիշեցի այսօր առավոտյան ֆեյսբուքում ինձ պատահած մի շատ հետաքրքիր ամերիկա-ֆրանսիական վեճ: Ամերիկայում մի վարող ֆուտբոլի համաշխարհային առաջնությունում Ֆրանսիայի հաղթանակի առթիվ ասել է. «Ես շնորհավորում եմ Աֆրիկան»: Իսկ Ամերիկայում Ֆրանսիայի դեսպանը նամակ է գրել այդ վարողին, ասելով, որ ֆուտբոլիստներից ընդամենը երկու հոգի է, որ չի ծնվել Ֆրանսիայում. բոլորը կրթություն են ստացել Ֆրանսիայում, խոսում են ֆրանսերեն, Ֆրանսիայի քաղաքացիներ են, և Աֆրիկան այստեղ կապ չունի:

Եվ հարց է առաջանում. «Արդյո՞ք կապ ունի Աֆրիկան, թե՞ կապ չունի Աֆրիկան»: Որպես ներդիր ձեր նախորդ խոսակցությանը: Եվ դա երևի որպես գիծ գնալու է մինչև քննադատական մտածողության հմտությունների, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի մասին գիտելիքի, որ դուք ուզում եք ստանալ, մեր վերջին պահը: Որովհետև վաղը մենք պիտի ընտրենք ձեզանից՝ ձեր կողմից առաջադրված գրույցներ կամ կարծիքների բախում, և այդ կարծիքների բախումների հիման վրա կառուցենք խմբեր, որոնք պիտի պրակտիկորեն դիտարկեն, թե ֆասիլիտացիան ինչ է:

Ուրեմն ինչքան շատ բախումներ եղան, գերադասելի է՝ անկեղծ, այնքան լավ: Ինձ թվում է՝ նախաբանի առումով ես ամեն ինչ ասացի: Գուցե մնաց ասելու, որ, ավաղ, այն, ինչ ես ձեզ պատրաստվում եմ ասել, մաս-մաս մենք ասել ենք կոնֆլիկտների տրանսֆորմացիայի այլ դպրոցների ժամանակ, սակայն չենք ֆիքսել: Դրա համար հիմա սա տեսագրում ենք, և այնպես է ստացվել, որ ես բավական շատ բան եմ ուզում ձեզ ասել:

Ընդհանրապես մեր այս եռօրյա դպրոցն ինչպե՞ս է կառուցված. ինքը շատ ինտենսիվ է: Եվ իմ պատմելիքը նույնպես ինտենսիվ է լինելու: Ավելի կարևոր է՝ դուք լսեք, ֆիքսեք, հետո հետազոտեք, հասկանաք: Որովհետև մենք փորձում ենք ձեզ երեք օրվա ընթացքում տալ այն, ինչ Հայաստանի կրթական համակարգը գրեթե բացառապես, գրեթե ընդհանրապես չի տալիս: Բայց դա չի նշանակում, որ մենք դա անում ենք՝ հերքելով այդ կրթական համակարգը, այլ՝ օգտագործելով այն ամենը, ինչ այն ի վերջո ձեզ տվել է:

Ես հիմա փորձում եմ այս մի դասախոսությամբ ձեզ տալ այնքան ինֆորմացիա, որքան արևմտյան համալսարաններում կանցնեն մեկ կուրսի ընթացքում: Այսինքն՝ սա չի կարող չլինել ճեպագրույց. սա լինելու է շատ հպանցիկ պատմություն: Բայց մենք բոլորս զարգացած անձնավորություններ ենք և ձեզ համար սա արդեն, որպես ներածական, կլինի մուտք այն ասպարեզի մեջ, որը մենք անվանում ենք կոնֆլիկտների տրանսֆորմացիա: Դուք ուժեղ անձնավորություններ եք, ձեր սերունդը արել է հեղափոխություն, այստեղ ներկաներից ոմանք արել են հեղափոխություն, էնպես որ պիտի արագ կարողանաք ընկալել այն ամենը, ինչ, ավաղ, մեր կրթական համակարգը չի տալիս:

Ի՞նչն է իմ այսօրվա պատմության գլխավոր թեզը, նպատակը. բացատրել ձեզ տարբերությունը մնացած ամեն ինչի և կոնֆլիկտների տրանսֆորմացիայի միջև: Մեր նպատակն է, որ դուք հասկանաք, էսպես ասենք, թվացյալ ընդունված պարադիգմի և կոնֆլիկտների տրանսֆորմացիայի պարադիգմի միջև տարբերությունները: Պարադիգմը հայերեն ասում են հարացույց: Եվ ի՞նչ է պարադիգմը. **պարադիգմը դա մի համակարգ է, որը որոշակի տեսակետից թվացյալ համակարգված վիճակում է: Այն կազմված է ինչ-որ ֆոկալ կետերից, և եթե այդ ֆոկալ կետերը ընկալում եք, ձեր հայացքով միավորում եք դրանք** (ես փորձում էի նկարել Մեծ Արջ համաստեղությունը. երևի սխալ եմ նկարել)՝ ստանում եք համաստեղություն: Ուրեմն՝ **պարադիգմը դա այն է, որ որոշակի**

**տեսակետից իրենից ներկայացնում է համակարգ: Նա կազմված է ֆոկալ ինչ-որ կետերից, հասկացություններից և մեջը՝ դատարկություններից, որոնց միջև կապը հաստատում է մեր ուղեղը:** Համաստեղություններ ֆիզիկապես գոյություն չունեն. դա մեր հայացքի արդյունքն է: Մյուս կողմից, այնքան շատ կարևոր դեր են իրենք կատարում մարդկության պատմության մեջ, որ ոչ ոք չի պատրաստվում հրաժարվել «համաստեղության» հասկացությունից: Պարադիգմը այսպիսի մի բան է:

Ո՞րն է այն «նախորդ» և, այսպես ասած, «ընդհանրապես գոյություն ունեցող» պարադիգմը: Դրա մասին ես շատ մանրամասն խոսել եմ արխայիկ մտածողության վերաբերյալ Jam Session<sup>45</sup>-ում: Նրա մեջ որոշակի իմաստով հենց այս հանգամանքները կան. որ աշխարհը թվում է իրերից բաղկացած, իրերի միջև դատարկություններ են: Եվ մեր համակարգերը շատ նման են այս (թվացյալ, համաստեղային) համակարգին. սա աթոռ է, սա սեղան է, այստեղ պատեր են, սա սենյակ է: Դա է, շատ կոպիտ ասած, սովորական նորմալ պարադիգմի նկարագիրը: Իսկ գիտական մոտեցումը արդեն սկսում է նայել, թե այս աստղը որտեղ է գտնվում, սա որտեղ է գտնվում: Իրականում իրենք ֆիզիկապես տիեզերքում ի՞նչ համակարգերի մաս են կազմում, որքա՞ն հեռավորության վրա են միմյանցից, ինչու՞ է մեկը ավելի ուժեղ փայլատակում, մյուսը՝ ավելի քիչ, և այլն:

Հիմա. նույն կերպ էլ կոնֆլիկտներին առնչվող հարցերը: Առաջին անգամ արևմտյան գիտության մեջ... Ես ասում եմ արևմտյան, որովհետև արևելյան գիտությանը որքանով որ ես ծանոթ եմ, նույնպես ծանոթ եմ արևմտյան գիտության միջոցով: Այսինքն՝ որոշակի ֆիլտրացիա է եղել, Չինաստանի ստրատեգիաների մասին, չինական մտածողների՝ ես կարդացել եմ, բայց շնորհիվ արևմտյան գիտության: Մենք պիտի հասկանանք, որ մենք բոլորս գտնվում ենք արևմտյան գիտության դաշտի մեջ. չկա այլ տարբերակ, ավաղ, այսօր աշխարհում: Նույնիսկ երբ փորձում են հասկանալ, որ սա «արևմտյան գիտություն է»՝ նրանք փորձում են հասկանալ արևմտյան գիտության մեթոդաբանությունների միջոցով:

Եվ ահա այդ գիտության մեջ հայտնի է, ասենք, Թուկիդիդեսի պելոպոնեսյան պատերազմը<sup>6</sup>, որ ձեզնից ոմանք երևի ուսումնասիրել են, եթե միջազգային հարաբերությունների ասպարեզում հատուկ կրթություն ունեն, - երբ առաջին անգամ սկսել են ուսումնասիրել պատերազմը: Ինչու՞ հենց պատերազմը: Նույն պատճառով, ինչ որ նորությունների մեջ. եթե վատ նորություն է՝ ավելի շատ ուշադրություն է գրավում: Եթե լավ նորություն է՝ հաճախ չեն էլ հաղորդում: Որովհետև մարդը բնագոյաբար, որպես կենդանի արարած, ուզում է խուսափել վտանգներից:

Երևի այդ նույն պատճառով այն, որ **խաղաղությունը նույնպես ուսումնասիրելու բան է, շատ ուշ է հասկացվել, և հասկացվել է սկզբում պատերազմի առնչությամբ: Այսինքն խաղաղությունը դիտարկվում էր որպես իրադրություն՝ մինչև պատերազմ: Մա պատերազմն է: Իրադրություն կա՝ պատերազմից առաջ և հետո իրադրություն. սա խաղաղությունն է:**

Արևմտյան մտածողությունը, գիտությունը շարունակել է զարգանալ, և դարեր հետո (իհարկե ես ամբողջ պատմությունը չեմ կարողանալու ձեզ պատմել) շատ կարևոր դեր են կատարել որոշ

<sup>4</sup> Արխայիկ մտածողություն. Մաս 1. Տեսլականը և նպատակը՝ քննադատական մտածողության անհրաժեշտ մաս (Jam Session 31)՝ [http://am.epfarmenia.am/archaic-thinking\\_part-1/](http://am.epfarmenia.am/archaic-thinking_part-1/)

<sup>5</sup> Արխայիկ մտածողություն. Մաս 2 (Jam Session 33)՝ [http://am.epfarmenia.am/archaic\\_thinking-part2/](http://am.epfarmenia.am/archaic_thinking-part2/)

<sup>6</sup> Peloponnesian War: [https://en.wikipedia.org/wiki/Peloponnesian\\_War](https://en.wikipedia.org/wiki/Peloponnesian_War)

արևմտյան մտածողներ, ինչպես, օրինակ, Հոբբսը<sup>7</sup>, որը առաջ է քաշել այն թեզը, որ մարդը մարդու հանդեպ գազան է<sup>8</sup> (եթե չկա հասարակություն): Որը շատ տարածված թեզ է մինչև այսօր: Եվ՝ որ մարդիկ իրար կհռչոտենին, եթե նրանց վրա չլիներ «իշխ»: Էս մի մարդը կուտեր մյուս մարդուն, բայց իրա գլխին նստած է «իշխ»-ը՝ իրա շոշափուկներով, չի թույլ տալիս:

Եվ այս համակարգը Հոբբսն անվանել է «Լևիաթան»<sup>9</sup> - բազմաշոշափուկ հրեշ: Մա պետության առաջին նկարը չէ, իհարկե, բայց այն ժամանակվա Եվրոպայի համար շատ կարևոր կոնցեպցիա է եղել, որովհետև Հոբբսը բացատրել է իրավունքի էությունը ըստ այս համակարգի. իրավունքը ուժինն է: **Մարդիկ, որպեսզի իրար չհռչոտեն՝ մի ուժեղը գալիս է և մնացածներին՝ բռնորին, հպատակեցնում է: Կամ՝ ուժեղը, որ գուցե անձնավորված չէ, այլ ուժեղ համակարգը՝ այդ Լևիաթանը: Եվ այդ դեպքում օրենք է այն ամենը, ինչ այդ Լևիաթանը պարտադրում է. այստեղ արդարության հարց չկա:** Օրենքը եթե կա՝ պիտի դրան հպատակվես: Այստեղ մարդիկ միայն մի բանի համար են պայմանավորվել, որ չսպանվեն, որ իրար չհռչոտեն:

Հետո, գրեթե զուգահեռաբար գալիս է մեկ այլ մտածող-գիտնական-փիլիսոփա՝ Ջոն Լոքը<sup>10</sup>, և ասում է. բայց սա լավ համակարգ չէ: **Ավելի լավ համակարգ է, եթե մարդիկ ոչ միայն պայմանավորվում են, որ միմյանց չսպանեն և դրա համար են համաձայնում Լևիաթանի գոյությանը, այլ անընդհատ պայմանավորման մեջ են: Այսինքն՝ այն օրենքը, որը Լևիաթանը օգտագործում է, եթե ձեզ դուր չեկավ՝ դուք կարող եք շարտել դեն:**

Հիմա մենք ապրում ենք հեղափոխության օրոք, և մեր ղեկավարը ասում է. «Մենք ամեն ինչ անելու ենք ըստ օրենքի»: Իսկ մեր ղեկավարի արդարադատության նախարարը ասել է, որ, ավաղ, Հայաստանում քիչ է դիտարկվել իրավունքի պարադիգմը. իրավունքը օրենքին հակասում է, որովհետև կարող է օրենքը քեզ թույլ չի տալիս իրավունքը իրագործել, բայց եթե դու էդ իրավունքը ունես՝ դու իրագործում ես (արտոնված ես իրագործել): Այսինքն՝ լրիվ որոշված չէ Հայաստանում այդ խնդիրը: Եվ «Սասնա Շռերն»<sup>11</sup> էլ ասում են. «Եթե մի բան մեզ դուր չեկավ՝ մարդ ենք սպանելու». հենց հիմա էլ են շարունակում ասել՝ ազատվելուց հետո էլ:

Ուրեմն՝ այդ հարցը, թե որտե՞ղ է քո իրավունքը սկսում ու վերջանում՝ մեզ մոտ այսօր տատանման մեջ է, ինչպես և շատ այլ հասարակություններում, և գրեթե անընդհատ: Բայց կան ավելի ստաբիլ իրադրություններ, երբ համակարգը նորմալ է գործում: Այսինքն, եթե օրենքը դուրդ չեկավ՝ իրավունք ունես այն փոխելու ըստ գոյություն ունեցող ինստիտուցիոնալ համակարգերի. խաղաղության մեկ այլ տարբերակ է դա:

Երկու դեպքում էլ խաղաղությունը սահմանափակված է քո հասարակությանը: Ես հիմա հղում եմ անում մեկ այլ դասախոսության՝ Jam Session-ի, որ արել եմ տեսությունների վերաբերյալ<sup>12</sup>, որտեղ ես դիտարկում եմ այն, թե ինչպե՞ս է այս նույնը դիտարկվում համաշխարհային, միջազգային հարաբերությունների տեսակետից: Ձեզանից ոմանք կարող է դրա որոշակի մասերը նույնիսկ ուսումնասիրած լինեն: Ինչպես, օրինակ, համարվում է, որ ռեալ-պոլիտիկում հոբբսյան թեզն է

<sup>7</sup> Thomas Hobbes: [https://en.wikipedia.org/wiki/Thomas\\_Hobbes](https://en.wikipedia.org/wiki/Thomas_Hobbes)

<sup>8</sup> State of nature: [https://en.wikipedia.org/wiki/State\\_of\\_nature](https://en.wikipedia.org/wiki/State_of_nature)

<sup>9</sup> Leviathan: [https://en.wikipedia.org/wiki/Thomas\\_Hobbes#Leviathan](https://en.wikipedia.org/wiki/Thomas_Hobbes#Leviathan)

<sup>10</sup> Ջոն Լոք՝ [https://hy.wikipedia.org/wiki/%D5%8B%D5%B8%D5%B6\\_%D4%BC%D5%B8%D6%84](https://hy.wikipedia.org/wiki/%D5%8B%D5%B8%D5%B6_%D4%BC%D5%B8%D6%84)

<sup>11</sup> Երևանում գրավել են Էրեբունու ՊՊԾ գունդը՝ <https://epress.am/2016/07/17/273700.html>

<sup>12</sup> Քննադատական մտածողություն. տեսություններ (Jam Session 4)՝ [http://am.epfarmeria.am/critical\\_thinking/](http://am.epfarmeria.am/critical_thinking/)

շարունակվում: Այսինքն՝ միջազգային հարաբերություններում, ի տարբերություն «ներսի» հարաբերությունների, որտեղ կա օրենք և կա Լևիաթան, տիրում է անարխիա:

Միջազգային հարաբերություններում չկա այդպիսի Լևիաթան, որը արգելի, ասենք, մեծամասնության սկզբունքով, որևէ բան... Որովհետև այստեղ՝ «ներսում» է՛լ կարող է տեղի ունենալ օրենքի խախտում՝ սպանություն. բայց կա ոստիկանություն: Իսկ միջազգային հարաբերություններում՝ չկա: Այն, ինչ կա՝ ռեալ-պոլիտիկի կողմից համարվում է ձևական: Եվ եթե խախտվեց՝ պատասխան չկա... ՄԱԿ-ը շատ փոքրիկ բան է, ասում է ռեալ-պոլիտիկ-ը. ինքը հաճախ ուժ չունի: Միջազգային օրենքը՝ համապատասխանում է ուժեղների շահերին, և այլն:

Եվ ուրեմն, եթե պետությունը ուզեց՝ ինքը խախտում է միջազգային օրենքը, գալիս, մտնում է մյուս պետության տարածք, ոսնձգում է՝ մի կտոր խլում է: Աշխարհը և Ուկրաինան Ռուսաստանի մասին ասում են, որ նա եկավ, Ուկրաինայից խլեց մի կտոր, հիմա էլ ուզում է երկրորդ կտորը խլի: Պուտինը և Թրամփը այդ հարցը քննարկում են՝ Թրամփը մեծ գոհունակությամբ նշում է, որ Պուտինն առաջարկեց հանրաքվե անցկացնել «Լուգանսկի ժողովրդական հանրապետությունում» և «Դոնեցկի ժողովրդական հանրապետությունում»: Ովքեր համաձայն չեն՝ ասում են դա կնշանակի օրինականացնել այն, ինչ Ռուսաստանն է ուզում անել:

Նույնը Ադրբեջանը ասում է Հայաստանի մասին. որ «եկավ ու խլեց Ղարաբաղը»: Եվ մենք էլի տեսնում ենք տեսակետներ որոշակի պարադիգմի մեջ, այսինքն՝ հարաբերական մոտեցումներ:

Մա միջազգային հարաբերությունների պատերազմի պատճառի մասին: Համարվում է, ռեալ-պոլիտիկ-ի տեսակետից, որ, քանի որ անարխիկ իրադրություն է՝ ով ուժեղ զգաց իրեն, ով պահը գտավ՝ խփելու է, առնանգի և այլն: Եվ նույն թեզն է, ինչ որ մարդկանց վերաբերյալ. որ մարդիկ իրար «զոհո» են. հենց թույլ տվեցիր՝ մեկը մյուսին «կզոհ»: Եթե չլիներ Լևիաթանը՝ մեկը մյուսին «զզելու» էր: Նույն ձևի՝ պետությունները, հասարակությունները. այդ նույն թեզն է:

Էդ թեզը առաջին անգամ, ըստ իմ գիտեցածի, հարցականի տակ դրեց Կանտը իր շատ հայտնի թեզով, որը ասաց, որ լուսավորյալ միապետությունները (հանրապետությունները. նա այն ժամանակ ժողովրդավարություն հասկացության հետ առանձնապես չուներ) լուսավորյալ հասարակությունները, լուսավորյալ Լևիաթանները միմյանց հետ չեն պատերազմում<sup>13</sup>:

Տարօրինակաբար դա մնաց սոցիալական գիտությունների մեջ, որտեղ գրեթե ոչ մի օրենք չկա, որպես միակ օրենքներից մեկը, որը մինչև հիմա հաստատվում է էմպիրիկ կերպով: Այսինքն՝ պարզվում է, որ եթե «լուսավորյալ միապետություն» բառակապակցությունը փոխարինենք «ժողովրդավարություն» հասկացությամբ, այդ ժողովրդավարությունները միմյանց հետ կռիվ չեն անում: Արդեն նույնիսկ Իզաբելլան դա նշեց մեր առաջին սերիայում: Ավելին. նրանք լիքը կռիվ են անում ոչ ժողովրդավարությունների հետ և նույնիսկ նրանց միջև երբեմն-երբեմն կարող են լինել թեթև ընդհարումներ: Բայց ստատիստիկորեն ասած (դա իհարկե օրենք չէ, այլ օրինաչափություն է), գերագույն մեծամասնության դեպքում այն ժողովրդավարությունները, որոնք իրենց տեսակետից իրենց համարում են ժողովրդավարություն՝ միմյանց հետ պատերազմ չեն վարում:

Եվ էստեղ հարց է առաջանում. «Իսկ ի՞նչ է պատերազմը»: Դրան էլ կանդրադառնանք:

<sup>13</sup> Democratic peace theory: [https://en.wikipedia.org/wiki/Democratic\\_peace\\_theory](https://en.wikipedia.org/wiki/Democratic_peace_theory)

Կանտից հետո, իհարկե, այս թեզը շարունակել է դիտարկվել շատ տարբեր տեսակետներից, և մոտավորապես մի քառասուն տարի առաջ շատ խոշոր գիտնականներ, մի շարք նորեյան մրցանակակիրներ հանդես եկան մի հայտարարությամբ, որը ասում էր, որ ազրեսիան մարդու գենետիկ որակը չէ<sup>14</sup>:

(Կատակով նշեմ՝ կարելի է սա կապել այսպես կոչված «հայու գենի» հարցի հետ): Որովհետև մինչ այդ կենսաբանական մոտեցումը համարում էր, որ, դե, մարդը մարդուն կուտի, եթե թույլ տաս: Եվ այդ ամբողջ համակարգը՝ Լևիթանը, ստեղծվել է, որ դա թույլ չտրվի: Այս գիտնականները երկար հետազոտություններ անելով ասացին, որ ոչ մի էմպիրիկ ապացույց չկա, որ ազրեսիան մարդու բնածին հատկանիշն է: Էլի պետք է հասկանալ՝ ի՞նչ նկատի ունեին ազրեսիա ասելով, որովհետև հայտնի է, որ ծիծաղը<sup>15</sup>, որը շատ կարևոր պահ է մարդու կենսագործունեության՝ ազրեսիվության արտահայտում է նույնպես: Նրանք նկատի ունեին ազրեսիայի ոչ ինքնապաշտպանական, ասենք, և այլն, որոշակի մակարդակը: Բայց այն, որ դա չի ապացուցվել, որ ազրեսիան մարդուն ի ծնե հատուկ է՝ չի նշանակում նաև, որ հատուկ չէ. ի վերջո, դա միայն կեսն է ապացույցի, որ՝ իրոք, ի ծնե՝ հատուկ չէ: Որովհետև եթե չի ապացուցվել ինչ-որ մի բան՝ չի նշանակում, որ ապացուցվել է հակառակը:

Ուրեմն՝ այդ ընթացքում (ես Կանտից թռա քսաներորդ դարի յոթանասունական-ութսունական թվականներ) լիքը այլ մոտեցումներ են առաջադրվել: Եվ հիմնականում պատերազմի ռուսումնասիրության միջոցով էր այդ հարցն ընդհանրապես քննարկվում. պատերազմի միջոցով էր խաղաղությունը ընկալվում: Առաջին (չֆիքսված) պահերից մեկը, երբ այդ պարադիգմը մարտահրավերի ենթարկվեց, Կանտին չհաշված՝ Լև Տոլստոյի վեպի հազար ութ հարյուր իննսունական թվականներից մեկի հրապարակումն էր: Որտեղ ռուսերեն այն ժամանակվա «и» տառը և «и» տառը պատահաբար օգտագործվում էին փոխնիփոխ: Նրա վեպը կոչվում է «Война и миръ»: Էսպես էր գրվում, «ТВЕРДЫЙ знак»-ով էն ժամանակ: Եվ հրապարակումներից մեկում՝ առաջին անգամ, իսկ հետո՝ մի շարք այլ դեպքերում, սկսեց հրապարակվել և՛ այսպես՝ «Война и миръ», և՛ այսպես՝ «Война и миръ»:

Դա պատահական սխալ էր, որը ունի շատ խորը հիմք: Բանն այն է, որ ռուսերեն «խաղաղություն» և «աշխարհ» բառերը տվյալ բառի օգտագործման դեպքում նույն ծագումն ունեն՝ նույն տեղից են գալիս: «Мир» նշանակել է նախ և առաջ խաղաղություն, որից եկել է նրա «աշխարհ» հասկացությունը: Եվ կա ռուսերեն, էլի սլավոններեն շատ ուրիշ խոր, հին բառ աշխարհի համար՝ դա «светъ»-ն է («ятъ»-ով պիտի գրվի), որը էլի «լույս»-ի հետ է առնչվում: Բայց հենց այս խառնաշփոթը մի շարք ընթերցողների և մտածողների մոտ առաջին անգամ հարց առաջացրեց. ի վերջո Տոլստոյն ինչի՞ մասին էր գրում: Նա գրում էր «Պատերազմ և խաղաղություն», թե՞ նա գրում էր «Պատերազմ և աշխարհ»:

Նա գրում էր «Պատերազմ և խաղաղություն»: Նրա անձնական և սեփական ձևակերպումը սա է եղել: Բայց քանի որ արմատը նույնն է՝ պարտադիր չէր, որ այս սխալը արվեր, որպեսզի մենք հասկանալիք և ընդունեինք, որ խոսքը գնում է «խաղաղ աշխարհ» մի համընդհանուր արմատական հասկացության վերաբերյալ:

<sup>14</sup> Seville Statement on Violence: [https://en.wikipedia.org/wiki/Seville\\_Statement\\_on\\_Violence](https://en.wikipedia.org/wiki/Seville_Statement_on_Violence)

<sup>15</sup> Արխայիկ մտածողություն. Մաս 1. Տեսլականը և նպատակը՝ քննադատական մտածողության անհրաժեշտ մաս (Jam Session 31)՝ [http://am.epfarmeria.am/archaic-thinking\\_part-1/](http://am.epfarmeria.am/archaic-thinking_part-1/)

Եվ այդ ընթացքում զուգահեռաբար էլի շարունակվում են հետազոտությունները, ստեղծվում են ավելի ու ավելի իմաստունացող մոտեցումներ դեպի պատերազմը: Եվ դրա հետ կապված «կոնֆլիկտ» հասկացությունն է առաջանում սոցիոլոգիայի և հոգեբանության զարգացմանը զուգընթաց՝ տասնիններորդ դարից սկսած. զարգանում են և՛ «կոնֆլիկտ» հասկացության վերաբերյալ մոտեցումները, և՛ դրա դեմ միջոցները՝ կոնֆլիկտները հասցեագրելու միջոցները, գործիքակազմը:

Վերջին վաթսուին-յոթանասուն տարվա ամերիկյան համալսարանական համակարգում մենք կարող են տեսնել այնպիսի հասկացություններ, ինչպես conflict prevention՝ կոնֆլիկտների կանխարգելում, conflict resolution՝ կոնֆլիկտների լուծում, conflict management՝ կոնֆլիկտների կառավարում: Իմիջայլոց՝ էլի լեզուն, բառերը շատ կարևոր են: Management բառը «կառավարում» բառի համեմատ ունի որոշակի առավելություններ որոշակի կոնտեքստներում և իհարկե հակառակը՝ «կառավարում»-ն էլ իր իմաստն ունի: Բայց կառավարման մեջ էդ իշխի պահը կա, իսկ «manage»-ի մեջ ուրիշ բան կա՝ տակից դուրս գալ, գլուխ բերել, ոչ թե ղեկավարել՝ վերևից ներքև կամ ձիուն մտրակելով: Ուրիշ՝ կա՞ այս հարացույցում ինչ-որ հասկացություն:

26:08 **Դահլիճ** – «Transformation»:

**ԳՏԳ** – «Transformation»-ը գուցե դեռ չկար այն ժամանակ... գուցե կար: Մենք ասենք. այս վերոբերյալ հասկացությունները, որպես ակադեմիական գիտության մաս, սկսել են ձևավորվել մոտավորապես, ասենք, տասնիններորդ դարի ամենավերջին, քսաներորդ դարի սկզբում, իսկ «conflict transformation»-ը՝ քսաներորդ դարի քառասունականներից, երկրորդ համաշխարհային պատերազմի ազդեցության տակ է սկսել առաջանալ: Առաջին դեպքերից մեկը, ես չգիտեմ՝ նույնիսկ՝ օգտագործվել է, թե ոչ, դա Ֆրանսիայի և Գերմանիայի հաշտեցումից հետո, այսինքն՝ Գերմանիայի պարտությունից հետո, Caux<sup>16</sup> կոչվող շվեյցարական ամրոցում բանակցություններն էին Ֆրանսիայի և Գերմանիայի հարգարժան ներկայացուցիչների կողմից. դրանց խնդիրն էր՝ լուծել ժողովրդական թշնամանքի հարցը. պատերազմն արդեն ավարտվել էր, իսկ թշնամանքը, իհարկե, շարունակվում էր:

Ուրեմն՝ կա էս հարացույցում ևս մի հասկացություն առնվազն, էլի բավական նոր, բայց շատ կարևոր. post conflict reconstruction: Ուրիշ հարացույցներ նույնպես սկսեցին հանդես գալ կամաց-կամաց: Օրինակ՝ մենք գիտենք, որ ռուսերեն այդ մոտեցումը կոչվել է конфликтология – դա գալիս է ֆրանսերենից՝ conflictologie, որովհետև գիտության ֆրանսիական տարբերակը պարտադիր չէր, որ անընդհատ նույն կերպ զարգանար, ինչպես որ անգլոսաքսոն գիտությունը:

Պետք է էստեղ ուշադրություն դարձնել այն հարցին, որ սոցիալական գիտությունների մեջ գրեթե չի պատահում գիտնական, որը իր կողմի, իր ազգի, իր «ազգուգենի», իր «հայրուգենի» շահերը չպաշտպանի: Դրա համար, մասնավորապես, այս գիտությունները միշտ ավելի խոշոր սուբյեկտիվիզմ են իրենց մեջ պարունակում, բացի շատ այլ պատճառներից, քան՝ այսպես կոչված ճշգրիտ գիտությունները: Դրա համար, ասենք, ֆրանսերեն conflictologie-ն լրիվ նույն բանը չէր, բայց ռուսական տարբերակում ընդունվեց конфликтология-ն, իսկ հետո՝ հետաքրքիր կերպով, մտավ նաև անգլոսաքսոն մշակույթ: Նայում ես ամերիկյան համալսարանների այն բաժանմունքները, որոնք այս գործով են զբաղվում՝ և կարող ես տեսնել և՛ conflict resolution studies,

<sup>16</sup> Caux-Palace Hotel: <https://www.caux.ch/caux-palace-history>

և՛ conflict management studies, և՛ post conflict reconstruction studies, և՛ conflictology studies նույնպես: Այդ բոլոր հասկացությունները էսպես ասած **փոխներթափանցող թեզաուրուսներ**<sup>17</sup> ունեն՝ իրենք այսպես են դասավորվում միմյանց հանդեպ՝ մասնակիորեն «իրար մեջ մտած»:

խաղաղարարություն, կոնֆլիկտաբանություն, կոնֆլիկտագիտություն, կոնֆլիկտների տրանսֆորմացիա և այլն:

Մյուսը. շատ կարևոր մի հանգամանք: Այս բոլոր մոտեցումների զարգացումը տասնիններորդ դարի վերջից սկսած... Պատերազմը ուսումնասիրում էին Բիսմարկները<sup>18</sup>՝ Թուրկիդիդեսից հետո: Եվ դա իշխանների հարց էր համարվում՝ լավ իմանալ ստրատեգիաները պատերազմի մեջ և այլն: Իսկ կոնֆլիկտը երբ առաջ եկավ որպես հասկացություն՝ դա արդեն ավելի «ժողովրդավարական» հասկացություն էր բնականաբար, որովհետև բնական է, որ խոսքը ոչ միայն խոշորածավալ պատերազմների մասին է, այլ կոնֆլիկտը լինում է մարդկանց միջև, տարբեր մարդկանց խմբերի միջև և այլն: Եվ այդ հասկացությունը, սոցիոլոգիայի և հոգեբանության զարգացմանը զուգընթաց, որպես գիտության, սոցիալական գիտությունների զարգացմանը զուգընթաց համընկավ մեկ այլ պրոցեսի հետ՝ կարևորագույն պրոցեսի հետ, որն էր **հասարակության դերի բարձրացումը**: Դա էլի Լոքի ուսմունքի հետ է կապված, և ֆրանսիական հեղափոխության, և այդ նույն հանգամանքի, որ մե՛նք ենք որոշում, թե մեր «Լևիաթանը» ով է լինելու: Եվ այդ **հասարակության դերի բարձրացմանը զուգընթաց տեղի ունեցավ մի շատ կարևոր բան՝ հասարակության՝ պետության, պետական համակարգի մեջ չընդգրկվող մասերի ինստիտուցիոնալիզացիան, որոնցից առաջացան այսպես կոչված «ոչ կառավարական կազմակերպությունները», որոնք մեզ մոտ անվանվում են «հասարակական կազմակերպություն»**: Դրանցից մեկի՝ ԵՀՀ-ի<sup>19</sup> տարածքում դուք հիմա գտնվում եք: Պետությունից անկախ, բիզնես շահ չհետապնդող և ընտանիքից կամ կլանից դուրս կազմակերպությունները:

Առաջին հասարակական կազմակերպություններից մեկը՝ օֆիցիալ պետություններից համեմատաբար անկախ, համարվում է շվեդարական Կարմիր Խաչը<sup>20</sup>՝ հազար ութ հարյուր վաթսուներկաններին է ստեղծվել: Երկրորդը՝ համարվում է Ֆրիտյոֆ Նանսենի<sup>21</sup> կողմից Նորվեգիայում մասնավորապես հայոց ցեղասպանության պատճառով ստեղծված Նորվեգական փախստականների խորհուրդը<sup>22</sup>, որը մինչև այսօր կա, ինչպես և Կարմիր Խաչը: Հասարակական կազմակերպությունները գնալով իրենց դերը բարձրացնում էին: Նրանց էլ էին փորձում հասկանալ մարդիկ, և զուգահեռաբար նրանց վերաբերյալ նույնպես հետազոտություններ էին արվում, և նրանց հետազոտումը նույնպես դառնում էր գիտություն, և դարձել է այսօր գիտություն: Եվ հիմա դա շատ ուժեղ կապված է, բնականաբար, «քաղաքացիական հասարակություն» հասկացության հետ:

<sup>17</sup> Կոնստեքստի ընդլայնում. Գևորգ Տեր-Գաբրիելյան (Jam Session 38)՝

[http://am.epfarmenia.am/context\\_expansion/](http://am.epfarmenia.am/context_expansion/)

<sup>18</sup> Otto von Bismarck: [https://en.wikipedia.org/wiki/Otto\\_von\\_Bismarck](https://en.wikipedia.org/wiki/Otto_von_Bismarck)

<sup>19</sup> Եվրասիա համագործակցություն հիմնադրամ՝ <http://epfarmenia.am/>

<sup>20</sup> International Committee of the Red Cross:

[https://en.wikipedia.org/wiki/International\\_Committee\\_of\\_the\\_Red\\_Cross#History](https://en.wikipedia.org/wiki/International_Committee_of_the_Red_Cross#History)

<sup>21</sup> Fridtjof Nansen: [https://en.wikipedia.org/wiki/Fridtjof\\_Nansen#Statesman\\_and\\_humanitarian](https://en.wikipedia.org/wiki/Fridtjof_Nansen#Statesman_and_humanitarian)

<sup>22</sup> Բանախոսը սխալվում է. Նանսենի կազմակերպությունն այլ կերպ էր կոչվում, իսկ Նորվեգիայի փախստականների խորհուրդը ([https://en.wikipedia.org/wiki/Norwegian\\_Refugee\\_Council#History](https://en.wikipedia.org/wiki/Norwegian_Refugee_Council#History)) ստեղծվել է 1946 թվականին, թեև պատմական աղերս ունի Նանսենի կազմակերպության հետ:

Հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության ինստիտուցիաների մարմնավորում են: Որովհետև համալսարանը, օրինակ, կարող է լինել պետական կամ մասնավոր, իսկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունը ոչ պետական է, ոչ մասնավոր է: Եվ մենք տեսանք, ինչպես Խորհրդային միության քանդվելուց ի վեր այդ կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը սկսեցին գիտության կողմից համարվել փոփոխությունների ամենակարևոր շարժիչ ուժը, և մենք տեսանք, ինչպես այսպես կոչված գունավոր հեղափոխությունները՝ հետագոտելիս՝ սկսած երկու հազար երեք թվականի՝ Վրաստանի Վարդերի հեղափոխությունից<sup>23</sup>, Արաբական գարունն<sup>24</sup> էլ հետը, շատ մեծ դեր սկսեց հատկացվել հասկանալուն, թե ի՞նչ դեր է այնտեղ կատարել քաղաքացիական հասարակությունը: Անկախ նրանից, թե ինչ հետևանքներ էր դա ունենում՝ յուրաքանչյուր այդպիսի հեղափոխություն...

Իմիջայլոց եկեք նշենք, որ շատ քիչ այդպիսի հեղափոխություններ են եղել, որոնք անարյուն են տեղի ունեցել. մեկը՝ Վարդերի հեղափոխությունն էր՝ հենց առաջինը, Վրաստանում, մյուսը՝ տարօրինակաբար, և ձեզանից շատ քչերը երևի դրա մասին երբևէ մտածած կլինեն, Աբխազիայում Մերգել Բագապշի<sup>25</sup> ընտրությունների հետ կապված՝ նախագահի ընտրությունների հետ կապված, համընդհանուր ելույթն էր, երբ Ռուսաստանի նշանակված թեկնածուն չանցավ, որովհետև սուտ էին քվեարկել նրա համար, և անցավ Մերգել Բագապշը: Էլի, եթե չեմ սխալվում, երկու հազար երեքի շուրջ էր դա՝ երկուսին կամ չորսին, հիմա չեմ հիշում<sup>26</sup>: Եվ երրորդ դեպքը՝ դա առաջին «Օրանժի» հեղափոխությունն<sup>27</sup> էր, երբ Յուշչենկոն եկավ իշխանության Ուկրաինայում, նույնպես չեղան զոհեր: Մնացած՝ պրակտիկորեն բոլոր հեղափոխություններում, լինի դա մեր հետխորհրդային տարածաշրջանում՝ Կիրգիզիայում երեք հատ է եղել<sup>28</sup>, լինի դա «Արաբական գարնան» հեղափոխությունները... Միայն Թունիսն<sup>29</sup> էր համեմատաբար «խաղաղ», բայց այնտեղ էլ, ինչքան զիտեմ, զոհեր եղել են ինչ-որ պահի:

Եվ վերջապես մենք գալիս ենք «աշխարհի զարգացման գազաթնակետին» ի դեմս «հայուզենի» (կատակ), որը Ապրիլյան թավշյա, ոչ բռնի հեղափոխությունն էր, որը առանց զոհ է տեղի ունեցել, տարօրինակաբար գնալով աշխարհի զարգացման վեկտորին հակառակ, այն պահին, երբ աշխարհը շուրջը ավելի ու ավելի է «լնիաթանանում», ավտորիտարանում, բռնությունը ավելի ու ավելի է սկսում թագավորել նույնիսկ արևմտյան երկրների մեջ, լինի դա Դոնալդ Թրամփի ուսմունքը, թե Հունգարիան, թե Ֆրանսիայում Լը Պենի ազդեցության ուժեղացումը, Նիդերլանդներում, լինի դա Մեծ Բրիտանիայի Բրեքսիտը: Այն պահին, երբ աշխարհը, թվում է, գնում է դեպի փլուզում, երբ Թուրքիայում, Ադրբեջանում կենտրոնանում է ավտորիտարիզմը, Իրանում՝ կա ու կա, Ռուսաստանում շատ ուժեղ կենտրոնանում է՝ այս փոքրիկ «խեղճո կրակ»

<sup>23</sup> Rose Revolution: [https://en.wikipedia.org/wiki/Rose\\_Revolution](https://en.wikipedia.org/wiki/Rose_Revolution)

<sup>24</sup> Arab Spring: [https://en.wikipedia.org/wiki/Arab\\_Spring](https://en.wikipedia.org/wiki/Arab_Spring)

<sup>25</sup> Баранш, Сергей Васильевич:

<https://ru.wikipedia.org/wiki/%D0%91%D0%B0%D0%B3%D0%B0%D0%BF%D1%88,%D0%A1%D0%B5%D1%80%D0%B3%D0%B5%D0%B9%D0%92%D0%B0%D1%81%D0%B8%D0%BB%D1%8C%D0%B5%D0%B2%D0%B8%D1%87>

<sup>26</sup> Տե՛ս «Եվրոպական միությունը և Ղարաբաղյան հակամարտությունը» հոդվածը.

<http://gtergab.com/en/news/publicism/european-union-and-the-nagorny-karabakh-conflict/163/>

<sup>27</sup> Orange Revolution: [https://en.wikipedia.org/wiki/Orange\\_Revolution](https://en.wikipedia.org/wiki/Orange_Revolution)

<sup>28</sup> Kyrgyz Revolution of 2010: [https://en.wikipedia.org/wiki/Kyrgyz\\_Revolution\\_of\\_2010](https://en.wikipedia.org/wiki/Kyrgyz_Revolution_of_2010)

<sup>29</sup> Tunisian Revolution (2011): [https://en.wikipedia.org/wiki/Tunisian\\_Revolution](https://en.wikipedia.org/wiki/Tunisian_Revolution)

երկրում հանկարծ տեղի է ունենում հակառակը: Շատ հետաքրքիր է տեսնել այս ամբողջ պատմությունը:

Ուրեմն, քաղհասարակության դերը մեծանում է, մեծանում է, մեծանում է և վերջապես՝ հազար ինը հարյուր ինսուներկու թվականին, Բուտրոս-Բուտրոս Ղալին՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարներից մեկը, ծագումով ղպտի... Իսկ ի՞նչ է նշանակում ղպտի:

36:11 **Դահլիճ** – Եգիպտացի:

**ԳՏԳ** – Այո, եգիպտացի՝ հին եգիպտացի, ոչ թե արաբ եգիպտացի: Եվ շատ կարևոր է էլի «հայու գենի» տեսակետից հասկանալ ղպտիների կապը հայերի հետ: Ո՞րն է այդ կապը, ո՞վ կարող է ասել:

36:26 **Դահլիճ** – Քրիստոնեություն:

**ԳՏԳ** – Այո: Հին քրիստոնեական եկեղեցի է<sup>30</sup>: Եվ, իմիջայլոց, նեստորականության և ասորականի պես համարվում է շատ դաժան կրոն՝ շատ ուժեղ հոգեբանական բռնության վրա հիմնված. ղպտիական քրիստոնեությունը: Եվ ահա Բուտրոս-Բուտրոս Ղալին հանդես է գալիս մի աշխատանքով, որը կոչվում է «Խաղաղության օրակարգ» - An Agenda for peace<sup>31</sup>, որտեղ առաջ է քաշում երեք թեզիս, որոնք այն ժամանակ բավական խելացնոր և դիսիդենտորեն են ընկալվում: Ընկալվում են որպես «դիսիդենտություն» շատ կարևոր անձի կողմից: Որովհետև նա ասում է, որ խաղաղության ասպարեզում, խաղաղության գործառույթների մեջ, բացի ավանդական երկու գործառույթներից, որից մեկը բնականաբար peacemaking-ն է՝ խաղաղության հաստատումը, երկրորդը՝ peacekeeping-ն է, որը զինվորներն են անում՝ խաղաղության պահպանումը, խաղաղապահ գորքերը, որ ՄԱԿ-ը ունի, - կա նաև մեկ այլ ասպարեզ, որը կոչվում է peacebuilding – խաղաղության կառուցում: **Եվ կարելի է այդ պահը համարել, երբ այն, ինչ ասում էին շատ ակադեմիկոս «ծակ» գիտնականներ ամերիկյան և, ասենք, սկանդինավյան համալսարաններում՝ դարձավ օֆիցիալ դիսկուրսի մաս. որ խաղաղությունը կառուցվում է:**

Պարադիգմի փոփոխության դրոշը այդ պահին կարելի է դնել. պարադիգմը փոխվեց այդ պահին: Այդ պահից է, որ արդեն ոչ միայն հատուկենտ գիտնականները, այլև արդեն, կարելի է ասել, ամբողջ համաշխարհային հասարակությունը չի կարող չընդունել, նույնիսկ եթե համաձայն չեն, որ մենք հիմա այստեղ անգործ նստած չենք լսում ինչ-որ մեկին, որը ինչ-որ բաներ է բարբաջում: Մեր ամեն պահով մենք կառուցում ենք, որ այստեղ, հիմա, խաղաղություն...

ՏԵՂԻ ՉԻ՝ ՈՒՆԵՆՈՒՄ. խաղաղություն տեղի չի՝ ունենում: Եկեք գժվե՛նք: Եկեք քանդե՛նք էս տեղը:

...Մենք չենք քանդում էս տեղը: Ինչի՞ մենք չենք քանդում էս տեղը. որովհետև մենք պարզապես շատ նախ, շատ խելճ ու կրակ ենք և ա՞յլն:

**Խաղաղությունը ամեն պահին կառուցվում է մեզանից յուրաքանչյուրի կողմից: Խաղաղությունը որպեսզի չխախտվի՝ մեզանից յուրաքանչյուրը անընդհատ ճիգ է անում: Մենք կառուցում ենք այդ դաշտը՝ այդ ոստայնը, ամեն պահին, որպեսզի խաղաղություն լինի:**

**Եթե կա պատերազմ՝ պատերազմը այս համաստեղության պես ծակիկներից է բաղկացած. մի պահ այնտեղ պատերազմ է տեղի ունենում, իսկ մյուս մնացած բոլոր պահերին՝ էլի խաղաղություն է: Եվ**

<sup>30</sup> Coptic Orthodox Church of Alexandria: [https://en.wikipedia.org/wiki/Coptic\\_Orthodox\\_Church\\_of\\_Alexandria](https://en.wikipedia.org/wiki/Coptic_Orthodox_Church_of_Alexandria)

<sup>31</sup> An Agenda for Peace: [https://en.wikipedia.org/wiki/An\\_Agenda\\_for\\_Peace](https://en.wikipedia.org/wiki/An_Agenda_for_Peace)

հենց որ լինում է պատերազմ՝ մարդկանց գերագույն մեծամասնության ցանկությունը (եթե նրանք իհարկե գժված չեն, եթե ինքնառչնչացման հակում չունեն) վերահաստատելն է խաղաղություն:

Այդ հասկանալը՝ որ խաղաղությունը մեր ամենպահյա գործունեությունն է, որ երբ գնում ես դպրոց՝ խաղաղություն է հաստատվում, երբ ծնվում ես՝ խաղաղություն է հաստատվում, վերահաստատվում, երբ մայրիկդ ու հայրիկդ սեր են անում, որ դու ծնվես՝ խաղաղություն է վերահաստատվում, երբ դու գնում ես աշխատանքի ու հավատում ես, որ դու լավ մասնագետ ես՝ քեզ կընդունեն, ու ուզում ես նոր թիմի մեջ ընդգրկվել՝ դու խաղաղություն ես վերահաստատում. դա նոր-նոր սկսեց հասկացվել:

Այ հենց դա է, որ պարադիգմի փոփոխությունը ազդարարեց: Հասկանալի՞ է այդ պահը:  
**Պարադիգմի փոփոխությունը միշտ հայացքի փոփոխության հետ կապված հանգամանք է:**

Պարադիգմի փոփոխությունը սովորաբար գիտական ապացույց չի պահանջում. դա հայացքի փոփոխություն է, դա՝ մի համաստեղություն տեսնելուց՝ մի ամբողջ աշխարհի կամ գալակտիկա տեսնելուն անցնել է նշանակում:

(Հետաքրքիր է էլի, որ էդ բառը (գալակտիկա) հայերեն չկա: Կա մի գալակտիկայի անունը՝ Հարթագողը և «գալակտիկա» բառը արդեն ինքը նշանակում է Հարթագող՝ Ծիր Կաթին, բայց դա դարձել է տարբեր Ծիր Կաթինների նիշ, բայց հայերենում չկա: Միգամածությունը «туманность»-ն է:)

Ուրեմն՝ փոխվում է մեր հայացքը: Երբ որ էյնշտեյնը հայտնաբերեց հարաբերության տեսությունը՝ զուր չէ նա ասել, որ «ինձ շատ ավելի օգնեց Դոստոևսկին, քան թե մաթեմատիկոս Գաուսը<sup>32</sup>» այդ հայտնագործությունն անելու համար: Որովհետև **Դոստոևսկին օգնում է հայացքը փոխել:** Նա ասաց, որ այն, ինչ մինչ այդ թվում էր արսույուտ՝ իրականում հարաբերական է. որ լույսի արագությունն անփոփոխ է՝ իրականում փոփոխակա՞ն է (ես սա հատուկ եմ ասում, որ ձեզ արթնացնեմ):

Որ երկու անգամ երկուսը չորս է՝ թվում է, թե դա անշրջելի օրենք է: Բայց իրականում լույսի արագության դեպքում չորսից քիչ է, որովհետև մասսան քչանում է. եթե երկու կիլոգրամ անգամ երկուս ես անում՝ լույսի արագության դեպքում դառնում է երեք ամբողջ ինը տասնորդական և այլն:

Դա հայացքի փոփոխություն էր նախ և առաջ: Ուրեմն՝ պարադիգմի փոփոխությունը դա հայացքի փոփոխություն է:

Կա՞ն հարցեր կամ կոմենտարներ սրա վերաբերյալ:

Մի բան էլ ասեմ. հենց էս վերջերս մենք արժեքանության որոշակի սեմինարներ<sup>33</sup> ենք անում Բուն TV-ի և Կոդբ հիմնադրամի հետ կազմակերպված, և վերջին սեմինարի ժամանակ Դավիթ Հովհաննիսյանը<sup>34</sup> հարց տվեց, ասեց. «Արդյո՞ք նոր պատվիրան ստեղծվել է, թե՛ ոչ, երբևէ»: Դե

<sup>32</sup> Carl Friedrich Gauss: [https://en.wikipedia.org/wiki/Carl\\_Friedrich\\_Gauss](https://en.wikipedia.org/wiki/Carl_Friedrich_Gauss)

<sup>33</sup> Բուն TV:

Արժեքանություն՝ <https://www.youtube.com/watch?v=9VubeamM9bs&list=PLmwsBqROifgSvOofKR1w1yHRmD-7E5qGK>

<sup>34</sup> Արժեք, մշակույթ, քաղաքակրթություն. Դավիթ Հովհաննիսյան՝ <https://www.youtube.com/watch?v=9VubeamM9bs>

պիտի ասել, որ ես այն ժամանակ առիթ չունեցա դրա մասին ասել, պիտի ասել, որ տասը պատվիրաններն էլ չեն օգտագործվում այսօր՝ համարվում է, որ յոթն են օգտագործվում և բնականաբար «Մի սպանիր»: Էս արժեքի մասին է: (Էն, որ Իզաբելլան ասեց՝ արժեքը ի՞նչ է, ու գնացիք արժեքանության մեջ մտաք, արժեքային համակարգեր և այլն՝ էդ ծովի մեջ):

**Ուրեմն՝ բնականաբար համարվում է, որ մարդկության այս ամբողջ պրոգրեսը, որի մասին ես պատմում էի, կարևոր հիմք ունեցել է ի դեմս «Մի սպանիր» պատվիրանի՝ ամենաքիչ խախտվող պատվիրանի, և մեր թեման՝ պատերազմ, կոնֆլիկտ և այլն, շատ ուժեղ հենց այդ պատվիրանին է առնչվում:**

Եվ ես մտածեցի, որովհետև Դավիթ Հովհաննիսյանը հարցրեց. «Իսկ կա՞րողոք մեկ այլ պատվիրան, որը այդ պատվիրաններում չկա»: Եվ ես հասկացա, որ **կա մեկ այլ պատվիրան, որ է՛լ ավելի քիչ է խախտվում. դա «Մարդուն մի՛ կեր» պատվիրանն է, որը նույնիսկ արդեն գրված էլ չէ, որովհետև երբ Հին Կտակարանը ստեղծվում էր՝ արդեն դա խնդիր չի եղել այն ժամանակվա հրեա հասարակության համար: «Մարդուն մի՛ կեր». մարդակերությամբ մի՛ զբաղվիր. ոչ, դա ավելի դաժան է: «Մի՛ սպանիր»-ը շատ ավելի հաճախ է խախտվում և լիքը արդարացումներ ունի խախտվելու, իսկ «Մարդուն մի՛ կեր»-ը խախտողները... Ո՞նց էր անունը:**

44:53 **Դահլիճ** – Կանիբալիզմ:

**ԳՏԳ** – Կանիբալիզմով զբաղվողները... Ո՞նց էր էն հայտնի կանիբալի, ամերիկյան էն բլոկբաստեր կանիբալի անունը: Լեսթե՞ր: Մի խոսքով...

45:05 **Դահլիճ** – Գառների լռությունը:

**ԳՏԳ** – «Գառների լռությունը» ֆիլմում:

Եվ կամ, մինչև այժմ կան ինչ-որ արխայիկ աֆրիկյան ցեղեր (նու, այսօր երևի արդեն ոչ), բայց այսօր մնացել է միայն այդ ծեսը՝ արդեն առանց իրականում մարդ ուտելու, ըստ երևույթին, բայց դեռևս մի հիսուն տարի առաջ կային դեպքեր, որ ծիսական պատճառներով որոշ ցեղեր մարդ ուտում էին ըստ երևույթին, բայց դե դա շատ բացառիկ դեպք էր:

Եվ միշտ էլ լինում է հասարակության մեջ ինչ-որ մի մաս, որը ամենապարզ ու կարևոր ու ճիշտ հասկանալու բանը տենց էլ չի հասկացել: Օրինակ՝ մեր մոտ. որ եթե դու քո ճյուղին, որի վրա նստած ես, սղոցես՝ ի վերջո էդ ճյուղը քո հետ միասին ընկնելու է ներքև:

**Ուրեմն՝ «Մարդուն մի՛ կեր». է՛լ ավելի կարևոր, քան «մի սպանիր»-ը, արժեքավոր, և նույնիսկ արդեն չֆիքսվող պատվիրան է... Ինքը՝ իր կարևորությունը փոքրացել է, որովհետև դա մեր ներսը այնքան խորն է նստած, որ գրեթե կարիք չկա, որ դա արձանագրվի:** Բայց ո՞վ գիտի. հիմա ամեն ինչ վերածնվում է, վերակենդանանում է: Հիմա որոշ հասարակություններում մոդա է դառնում սեփական կայֆի համար ձեռքը կամ ոտքը կտրելը: Եվ կային այդպիսի դեպքեր, երբ ինչ-որ մարդ հայտարարել է, որ «ես ուզում եմ, որ իմ ձեռքը ինչ-որ մեկը կտրի և ուտի», և գտել էր մի հաճախող այդպիսի: Այսինքն՝ երբեմն արժի կրկնել նաև ա՛յդ արժեքը. նաև ա՛յդ պատվիրանը:

Ո՞ր հասանք:

Եվ սպանելու հետ կապված, իհարկե. ուրեմն՝ մի կողմից այս ամբողջ պատմությունը նաև կապված է նրա հետ, որ պատերազմների քանակը աշխարհում փոքրանում է. համենայն դեպս քառասունհինգ թվականից սկսած: Մթիվեն Փինքերը ունի լավ հետազոտություն<sup>35</sup> դրա վերաբերյալ: Նաև, ուրեմն, ամերիկյան որոշ գիտական դպրոցներ այդ հետազոտությունները արել են: Մենք տեսնում ենք երկու տենդենց. մի կողմից, որ ընդհանուր առմամբ սպանվող մարդկանց քանակը պատերազմներում (իսկ պատերազմն ինչն է տարբերվում չպատերազմից. ասացի, որ դրան կանդադարանանք՝ հիմա մոտենում ենք. սպանվելու, սպանվող մարդկանց քանակներով) քչանում է:

Եվ երկրորդ տենդենցը, որ «ոչ օֆիցիալ Լևիաթանների» միջև պատերազմների քանակն է շատանում (այսինքն՝ չճանաչված պետությունների կամ ոչ պետական կառույցների):

Բայց էլի ընդհանուր առմամբ զոհերի քանակն ավելի քիչ է, քան առաջներում: Իհարկե, սա զուտ տենդենց է, այն կարող է փոխվել, բայց ստացվում է, որ ներքին, էսպես կոչված, կամ քաղաքացիական, կամ էթնիկ կոնֆլիկտները շատ ավելի շատ են, քան օֆիցիալ երկու երկրների միջև պատերազմները (կամ երկու կամ ավելի), և ընդհանուր առմամբ զոհերի քանակը քչանում է:

Դա շատ հետաքրքիր է դիտարկել, որովհետև, ի վերջո, անընդհատ խոսակցություն է գնում, թե իսկ ինչպե՞ս որոշել, ինչն է պատերազմ, ինչը՝ ոչ: Եվ ահա ևս մի վաթսուն-յոթանասուն տարի առաջ ամերիկյան համալսարաններում այդ հարցերը քննում էին, ուրեմն, և Չիկագոյի դպրոցը որոշակի թեզեր առաջ քաշեց, որոնք հետո վերամշակվեցին: Եվ Չիկագոյի դպրոցը ասում էր, որ ինտենսիվ պատերազմի մասին խոսելիս մենք պիտի խոսենք որոշակի ժամանակահատվածում (ասենք՝ մեկ շաբաթում կամ մեկ ամսում) հազար զոհի մասին<sup>36</sup>: Իհարկե, սա միակ չափորոշիչը չէ, ինչպես սիրում են հիմա, այսօր ասել... չափանիշը չէ: Ուրեմն, կան նաև այլ չափանիշներ, ինչպես, օրինակ, տևողականությունը, ինչպես, օրինակ, բռնությունների այլ տեսակները, ասենք՝ տեղահանված մարդիկ, էթնիկ մաքրումը և այլն, և այլն: Ինչպես նաև մասշտաբը, թե դեմոգրաֆիկ առումով՝ ինչքան ժողովուրդ է, ինչ քանակությամբ ժողովուրդ է այս պրոցեսի մեջ ընդգրկված, և այլն:

Որովհետև, եթե նայես միայն միավոր ժամանակում զոհերով, ապա հայ-ադրբեջանական պատերազմը, օրինակ, գուցե պատերազմ չի, որովհետև եթե հաշվես Հայաստանի անկախության պահից՝ իննսուներկուսից մինչև իննսունչորսի մայիսը, երբ պատերազմական փուլը դադարեց և համարվում է, որ քսան հազար է եղել ընդամենը զոհ... Էնտեղ կարծեմ ստացվում է քսանութ ամիս՝ քսան հազար զոհ – յոթ հարյուր հիսուն զոհ ամսական, եթե սենց կոպիտ հաշվես: Բայց տևողությունը, այլ բռնությունների քանակը, մասշտաբը՝ բոլորը միասին պետք է հաշվի առնել:

50:14 **Դահլիճ** – Քանի որ հարցը վերաբերվում է կոնֆլիկտների տրանսֆորմացիային ու եթե համարենք, որ հայ-ադրբեջանական էդ հակամարտությունը պատերազմ չի, դա ուղղակի որակենք էթնոքաղաքական կոնֆլիկտ, երբ որ էթնոքաղաքական կոնֆլիկտների մեծամասնությունը վերջում ավարտվում է մի կողմի բնաջնջմամբ հիմնականում:

50:35 **ԳՏԳ** – Շնորհակալություն. Խնդրեմ Գայանե:

<sup>35</sup> The Better Angels of Our Nature: Why Violence Has Declined, Steven Pinker: [https://en.wikipedia.org/wiki/The\\_Better\\_Angels\\_of\\_Our\\_Nature](https://en.wikipedia.org/wiki/The_Better_Angels_of_Our_Nature)  
<sup>36</sup> The Correlates of War Project: <http://www.correlatesofwar.org/history>

50:38 **Գայանե Ղազարյան (ԳՂ)** – Ճիշտն ասած իմ հարցը ճշտման համար է. մասշտաբներ ասելով նկատի ունեք...

**ԳՏԳ** – Դեմոգրաֆիկ մասշտաբը: Կարող է և տարածքային...

**ԳՂ** – Տարածքը... հա՛: Ինչը՞ ... Ի՞նչն է, էլի, մտնում:

**ԳՏԳ** – Նախ և առաջ դեմոգրաֆիկ...

**ԳՂ** – Ինչքան՞ մարդ է: Ինչքան ժողովուրդը ոնց որ տուժում է անմիջականորեն, թե՞ ինչքան ժողովուրդը մասնակցում է:

**ԳՏԳ** – Ինչքան ժողովուրդը ազդված է...

50:59 **ԳՂ** – Ուղիղ իմաստով՝ ազդված... Հա: Իսկ տարածքների՞ իմաստով:

**ԳՏԳ** – Ինչ-որ պահի միշտ կանգ են առնում չէ՞:

**ԳՂ** – Հա:

**ԳՏԳ** – Այսինքն՝ ճիշտ ինչպես ցեղասպանության մասին խոսակցության ժամանակ ասվեց. «Ո՞ւմ ազգականն է տուժել, ո՞ւմը չի տուժել»:

**ԳՂ** – Հա:

**ԳՏԳ** – Հիմա, եթե համարենք, որ իմ ազգականներից ոչ մեկը, մենք Արևելյան Հայաստանից ենք, չի տուժել. արդյո՞ք ցեղասպանությունը ինձ վերաբերում է, թե՞ ոչ: Նույն կերպ հարց է էստեղ. Տարածքը... Ժողովուրդը ի վերջո... Ժողովուրդը ավելի կարևոր ցուցանիշ է ինչ-որ իմաստով, բայց տարածքն էլ են հաշվի առնում:

51:34 **ԳՂ** – Մեկ էլ երկրորդ հարցը:

**ԳՏԳ** – Եվ կարող է այլ, հա՞՞ իրենց հանրագումարով է որոշվում, որովհետև այս (միավոր ժամանաում գոհերի) թիվը չի, ոչ մի կերպ չի...

51:42 **ԳՂ** – Մեկ էլ մի հատ հարց էդ գոհերի քանակի նվազելու հետ կապված: Ես էլ ճիշտն ասած հակառակ տեսակետն էի լսել, որ ներկայիս տեխնոլոգիայի, ռազմական տեխնոլոգիայի հետևանքով գոհերի քանակը պատերազմներում ավելանում է: Որովհետև, ասենք, եթե են ժամանակ, մոտավորապես ասենք, մոտիկից պատերազմ էր գնում նետերով կամ չզիտեմ ինչով, իսկ հիմա, ասենք, մի ռումբով կարող էս շատ մեծ քանակությամբ մարդ սպանել: Էդ գոհերի քանակը մի քիչ ինձ համար...

52:12 **ԳՏԳ** – Զոհերի քանակը, ըստ Մթիվեն Փինքերի և այլ հետազոտողների, աշխարհի մարդկության պատմության ընթացքում անընդհատ դեպի ներքև է գնում, բայց դա էլ հարաբերական է: Դա միշտ հաշվվում է մարդկության քանակի... Այո, մարդկության քանակի համեմատությամբ: Առանձին դեպքերում, իհարկե, կարող է լինել (աճ), բայց ես բոլորին խորհուրդ եմ տալիս նրան ստուգել և սեփական կարծիքը դրա մասին կազմել, որովհետև ինչպես և այս հազար թիվը, դրանք բոլորը սոցիալական հետազոտությունների արդյունքներ են, որոնք կարող են վերափոխվել:

52:54 **Դահլիճ** – Ես մի հատ սենց հարց ունեմ. հազար թիվը, որ ասում եք, էդ գոհերը մի՞ կողմից են, թե՞ կոնֆլիկտի տարբեր կողմերից:

52:58 **ԳՏԳ** – Կապ չունի: Կապ չունի. գիտնականի համար կողմեր չկան:

53:04 **Դահլիճ** – Պատերազմող բոլոր կողմերը միասին, հա՞:

53:07 **ԳՏԳ** – Զոհ եթե եղավ, հազար գոհ իրար հետ կովելու պատճառով (որոշակի միավոր ժամանակում), ապա դա համարվում էր կլասիկ, ինտենսիվ պատերազմ: Բայց մնացած բոլոր հարցերն էլ կարևոր են, որովհետև էդ հայ-ադրբեջանականի դեպքում էլ յոթ հարյուր հիսունը միջին թիվն է. կարող է մի երկու ամիս եղել է, որտեղ երեք հազար է եղել, հետո ասենք մի երկու ամիս, որտեղ հինգ հարյուր է եղել:

53:38 **Դահլիճ** – Քառօրյա պատերազմը ստացվում է պատերազմ:

53:40 **ԳՏԳ** – Շատ հավանական է: Եթե չորս օվա մեջ՝ հարյուր...

53:44 **Դահլիճ** – Չորս օրվա մեջ՝ մենակ մեր կողմից հարյուր:

**ԳՏԳ** – Երկու հարյուր քանիս: Հա:

53:48 **Դահլիճ** – Իսկ եթե համարենք, որ իրենց կողմից էլ մոտավորապես այդքան գոհ կլինեք, ուրեմն...

53:52 **ԳՂ** – Օրական քսանհինգ է գալիս մենակ մեր կողմից:

**ԳՏԳ** – Հա:

**ԳՂ** – Յոթ հարյուր հիսուն՝ մենակ մեր կողմից: Գումարած մյուս կողմը՝ հազարը կանցնի:

54:00 **ԳՏԳ** – Դե սա, ի վերջո, ավելի շուտ, ես այսպիսի տվյալներն ընկալում եմ որպես միտքո շարժելու միջոց, քան թե որպես վերջնական ինչ-որ չափանիշ: Շարունակենք:

Այո: Եվ այստեղ ուրեմն առաջանում է...

Ես ինչի՞ պատվիրանների հետ էս հարցը կապեցի. որովհետև այստեղ առաջանում է այն հարցը՝ սպանելու գիծը, որտե՞ղ իմաստ ունի, կարող ես, իրավունք ունես մարդ սպանել, որտե՞ղ՝ ոչ. ստիպված ես: Հենց դրա... Եվ **«բռնություն» հասկացությունը**. այս ամբողջ գիտության մեջ արդյունքում ներս եկավ «բռնություն» հասկացությունը:

Ես ցույց եմ տալիս պարադիգմի՝ նոր պարադիգմի կազմավորման և պարադիգմի փոփոխման պատմությունը: Ուրեմն. մինչ այդ այն բռնությունը, որին Լևիաթանը իր հպատակներին ենթարկում է, չէր համարվում ինչ-որ բան, որ իմաստ ունի հաշվի առնել պատերազմի և խաղաղության մասին խոսելիս: Նոր պարադիգմում՝ բռնության հասկացությունը. և՛ բռնության պատմության մասին է խոսքը գնում, և՛, չնայած չկա այդպիսի գիտական հետազոտություն, բայց մենք կարող ենք, **ինչպես պատերազմի գոհերի քանակի վերաբերյալ՝ կարող ենք տեսնել, որ ամբողջ աշխարհում պրոգրես եթե կա՝ պրոգրեսի պայքարը հանուն նրա է, որ մարդու նկատմամբ որքան կարելի է քիչ նկատելի բռնություն կիրառվի:**

Որովհետև «աննկատ բռնությունը», գուցե «լավ իմաստով բռնությունը», դա հասարակության կողմից քո ձևավորումն է:

Ուրեմն էդ բառը ես էստեղ գրեմ, որովհետև կարևոր բառ է (բռնություն), և էդ բառը մենք հիշենք, անցնենք առաջ:

Եվ ահա ինչպիսի՞ն է այդ դեպքում այդ պարադիգմի պատկերը:

Եթե հին պարադիգմի պատկերը մոտավորապես սա էր, որ նրանք իրար են խփում հենց որ առիթ եղավ, և ամբողջ գիտությունը, մտածողությունը, հանրային աշխատանքը, հասարակական, պետական աշխատանքը նվիրված էր նրան՝ կառուցել բանակ, պինդ լինել, կովել, պատրաստ լինել հարձակման, առիթ եղավ՝ դու՛ հարձակվես...

Իսկ քո ներսում դու ինչքա՞ն էս բռնաբարում, ո՞ւմ, ինչքա՞ն էս կեղեքում, ինչքա՞ն էս հալածում՝ դա քո սուվերեն, «անձնական» իրավունքն է, որպես Լևիաթանի: Մոտավորապես նույնը՝ ինչ ասում էր Սերժ Սարգսյանը և Հանրապետական կուսակցությունը վերջին քսան տարվա ընթացքում: Եվ ավելին՝ դա, իբր, «պե՛տք է»։ դու պիտի բռնություն, բռնության մշակույթ քո մեջ դաստիարակես, որպեսզի թշնամու դեմ լավ կովես: Էրեխեն, որ գնում է մանկապարտեզ՝ պիտի քսի տաս, ասես. «Խփի՛ էն մյուս տղուն, որովհետև այլապես դու քո թշնամի թուրքին չե՛ս խփի, ժամանակը երբ գա, երբ քեզ բանակ տանեն, որովհետև ծնողներիդ մոտ կաշառք չհերիքեց ազատելու...»: Ուրեմն՝ էդ հին պարադիգմն է:

Նոր պարադիգմը բավական այլ տեսք ունի, որովհետև ինքը ասում է. «Սա աշխարհ է: Ամեն մասը էս աշխարհի, ամեն պահը, ամեն մասը պիտի պայքարի բռնության մշակույթի դեմ»:

Դա՛ է կոնֆլիկտների տրանսֆորմացիայի պարադիգմը:

Մի թեզը այն է, որ ամեն քայլափոխին դու խաղաղություն կամ կառուցում ես, կամ՝ չես կառուցում, այսինքն կամ՝ պատերազմ ես կառուցում: Որ պատահական պահ քո կյանքում չկա, որ խաղաղությունը կառուցելու բան է, շոշափելի, ինչպես սարդի սարդոստայնը. դու քեզ միջից «արտադրում ես»: Մարդկությունը համաշխարհային մասշտաբով իր միջից արտադրում է խաղաղություն, և ժամանակ առ ժամանակ այն կտրվում է, այդ սարդոստայնները, բայց հիմնականում նա կրկին ու կրկին, վերստին, վերքերը լիզելով՝ նա արտադրում է խաղաղություն. դա առաջին թեզն է:

Երկրորդ թեզը՝ որ մարդիկ պատահաբար չեն սպրում, որ ամեն քայլափոխին ամեն ակնթարթը նրանց կյանքի իմաստ ունի խաղաղություն արտադրելու և այլ լավ, կարևոր, ստեղծագործ գործեր անելու համար, որ պատահական չեք դուք հիմա էստեղ նստած, ես հիմա էստեղ խոսում. ոչ մի բանը պատահական չի կատարվում:

Մյուսը՝ որ ամեն ասպարեզում ես դու խաղաղություն արտադրում: Բաժանիր քո երկիրը, քո աշխարհամասը, քո հասարակությունը ասպարեզների. դու կարող ես չլինել բանակում զինվոր կամ դիվանագետ, բայց դու քո հասարակության մեջ, քո թիմում, քո աշխատավայրում, ուսումնական տարածքում, քաղաքում, գյուղում հյուր գնալիս, ճանապարհորդելիս՝ դու ամեն պահին խնդիրներ ունես լուծելու, որպեսզի խաղաղությունը վերարտադրվի, ամրապնդվի, զարգանա: Այսինքն՝ մենք «տեղից չշարժվելով» իսկ հնարավորություն ունենք ազդելու, որպեսզի պատերազմ քիչ լինի,

որպեսզի կռիվ շատ չլինի, որպեսզի քիչ բռնություն լինի, որպեսզի քիչ զոհվեն մարդիկ, որպեսզի և այլ տեսակի բռնություններ քիչ զգան մարդիկ. դա է հիմնական, կարևորագույն թեզը:

Բնականաբար այս երկու պարադիգմերը հիմա ներթափանցված վիճակում են գտնվում: Մի կողմից՝ ոչ մի երկիր, պետություն բանակից չի հրաժարվում գրեթե: Բոլորը համենայն դեպս այնուամենայնիվ պատրաստ են, որ կարող է մի գիծը արխայիկ տարբերակով՝ գա՛: Մյուս կողմից՝ ավելի ու ավելի է սկսում հաղթանակել այս թեզը խաղաղության:

Եվ մեր բոլոր ռեֆորմները, մեր հեղափոխության էությունը այս թեզի հաղթանակն էր: «Ոչ բռնի»: Ինչո՞ւ «ոչ բռնի»: Իսկ ի՞նչ կլինեք, որ «Մասնա ծոերի» պես ասենք. «Պետք է մի երկուսին սատկացնեք՝ սենց-նենցերին»: Ինչո՞ւ ոչ բռնի. որովհետև բռնությունը բռնություն է ծնում: Եվ այլն, և այլն. շատ պատճառներով:

Մենք՝ ամեն մեկս, հիմա շանս ունենք աշխատել դրա վրա: Եվ, իհարկե, շատ խոր հակասություն է մեր ոչ բռնի ներքին քարոզը մեր կոնֆլիկտի հետ՝ Ադրբեջանի հետ: Մենք չենք կարողանում այս (ևոր պարադիգմը) համաստեղությունը կառուցել՝ համակարգը, հարացույցը կառուցել, որովհետև եթե խոսքը լինեք պարզապես պարզ պաշտպանության վերաբերյալ՝ իհարկե, ասենք շվեյցարացիների պես երջանիկ կզգայինք մենք: Բայց հենց որ կոնֆլիկտի ինտենսիվությունը, ուժգնությունը բարձր է, ինչպես ասենք Իսրայելի դեպքում կամ որոշ այլ երկրների՝ Սիրիայի կամ Ուկրաինայի դեպքում, շատ ավելի դժվար է միավորել կոնֆլիկտը խաղաղության հարացույցի հետ:

Դրա համար մեզ մոտ թեզ էր հնչում, շատ հաճախ սերժիկական ճամբարից, բայց իր մեջ կա ռացիոնալ հատիկ, որ ասում են. «Եթե շատ քարոզենք խաղաղությունը՝ էդ ժողովուրդը պիտի գնա, էդ էրեխեն պիտի գնա սահմանագիծ ու խփի, կրակի, մարդ սպանի, արյուն քամի, միսը ճղի, ուղեղը անջատի, սիրտը քանդի կենդանի արարածի: Ինքը ո՞նց է կարողանալու դա անել, եթե էդքան զգայուն եղավ, եթե երևակայությունը զարգացավ, եթե իրա գիտելիքը շատ եղավ»:

Էդ միավորել դժվար է:

Դրա համար էլ սա Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի դպրոց է, որովհետև **և՛ մեր պետությունը, և՛ կառավարությունը, և՛ մենք ամենքս յուրաքանչյուր պահի պիտի ձևեր գտնենք, պիտի միջոցներ մտածենք, որպեսզի դիմակայենք այդ հանգամանքին**:

Ավելին, առավել ևս, որ եթե սա վերցնում ենք որպես, էսպես ասած, հիմնական նորմ, թե ինչն էր պատերազմ, ինչը՝ ոչ, ապա էսպես կոչված խաղաղ վիճակում ամիսը երկու-երեք հոգի կորցնելը ընդհանրապես խայտառակություն է: Իսկ ամիսը հինգ-վեց հոգի կորցնելը, որովհետև երկու-երեք հոգին էլ մենք ինքներս մեր բռնի մշակույթի պատճառով մեր բանակում ենք ոչնչացնում՝ է՛լ ավելի խայտառակություն է: Այսինքն՝ ո՞րն են մեր բռնության մշակույթի հետքերը: Փառք Աստծո՝ մերը այդքան էլ բռնության մշակույթ չէ, և հեղափոխությունը դա ցույց տվեց: Ո՞րն է լավագույն ճամփան բռնության մշակույթը փոխել, ո՞րն են լավագույն աշխատող մեխանիզմները, և ձեր օգնությունը դրա մեջ շատ մեխ է լինելու, որովհետև ձեզանից՝ ամեն մեկից, կախված է լինելու դա անել, ինչպես էս ասացի:

1:03:12 **ԳՂ** – Մի բան հարցնեմ, էլի. ճիշտ է, մի քիչ անցանք էդ թեմայից, բայց նոր հիշեցի: Ութսունութ թվականն էլ եղավ ոչ բռնի. զոհեր չեն եղել չէ՞:

1:03:22 **ԳՏԳ** – Եթե վերցնում ենք Հայաստանի անկախացման ճանապարհը և պատմությունը՝ այո՛, բայց նա ներթափանցված էր Լեոնային Ղարաբաղի կոնֆլիկտի զարգացման ընթացքի հետ, դրա համար անարյուն չէր:

1:03:35 **ԳՂ** – Հա, եթե վերցնում ենք առանձին... Բայց Հայաստանում շարժումը սոցիալական...

**ԳՏԳ** – Բայց ինքը շատ ուժեղ փոխկապակցված էր Լեոնային Ղարաբաղի հարցի հետ: Եթե առանձին դիտարկեինք... Այ իմ հենց խնդիրը՝ իմ էքզիստենցիալ խնդիրը դա է: Ինչո՞ւ ես չեմ կարող կշեռքի նույն նժարին դնել թավշյա հեղափոխությունը և ութսունութ թիվը. որովհետև ութսունութ թվին շատ շուտ սկսեցին ասել. «Պետք է ադրբեջանցիներին դուրս հանել»: Իհարկե, Մումգայիթ է եղել, և այլն: Եվ նորմալ մարդիկ սկսեցին ադրբեջանցիներին տներից դուրս հանել: Գուցե ավելի մեղմ և բարի ու թավշյա ձևով, քան ադրբեջանցիները հայերին էին դուրս հանում, բայց հասկանում էք՝ այդ բռնության մշակույթը ինքը թունավորում է պետականության կազմավորման համար տեղի ունեցող պրոցեսները... Եվ Գայանեն է այստեղ խոսում. ու պետք է իմանալ, որ... Ո՞նց չասեմ, հա՞, մենք պատմության ժառանգությունը նույնպես պիտի հասկանանք, Ռաֆայել Ղազարյանի պես մարդկանց... Գայանեն Ռաֆայել Ղազարյանի դուստրն է: Ռաֆայել Ղազարյանի պես մարդկանց մոտեցումը, քարոզը, վերաբերմունքը խորապես հակասում էր, խորապես հակասում էր մի կտրված ծառին, որ ադրբեջանցին կտրեց, որովհետև իրան տնից դուրս էին քշում, որովհետև նրանք ծառն էլ կտրում՝ նոր էին գնում, այնքան թունավորված էին: Եվ դա մեր մեղքն է, և չնայած գուցե լավ է, որ դու մոնոթեոսիկ ես, չգիտեմ, լավ է, թե վատ է, ասում են՝ դա լավ է, և այլն. բայց դա մեր մեղքն է: Բայց մեղավոր չենք, որովհետև կոծվել, էսկալացիան էր տեղի ունենում կոնֆլիկտի: Այսինքն՝ եղտեղ պետք էր ինչ-որ ակցիաներ անել: **Բայց էն, որ ժողովուրդը թունավորվում է, երբ բռնության է դիմում, իհարկե դա փաստ է:** Եվ շատ եղպիսի հանգամանքներ կան, էլի էդ իրադրությանը վերաբերող: **Մեր ամենամեծ արժեքը Թավշյա հեղափոխությունն է. ամենաանբեկանելի, ամենամեծ արժեքը, որովհետև բռնություն տեղի չի ունեցել, բացի օրինական ճանապարհից. գրեթե տեղի չի ունեցել, էլի... հա, մի քիչ եղավ...**

Եվ նորից կրկնեմ երևի. խաղաղությունը և աշխարհը նույն բանն են: Խաղաղությունը կառուցում ես ամեն պահի, ամեն պահի դու ընտրություն ունես՝ խաղաղություն կառուցել, թե՛ ոչ: Դու ապրում ես պրոյեկտային պարադիգմում: Դու պրոյեկտներ ես, նախագծեր ես անընդհատ մտքիդ ունենում. դու ունես արժեքներ, դու ունես նպատակներ. դու անընդհատ ձգտում ես էդ նպատակներին: Էդ կառուցելը դա՛ է նշանակում, որ դա պրոյեկտ է. դու եթե նախագիծը մտքիդ չունես՝ չես կարողանա կառուցել:

Ասենք՝ ո՞րն է հիմա Թավշյա հեղափոխությունից հետո ամենամեծ խնդիրը. մի քանի շատ խոշոր վտանգներ կան՝ շատ խոշոր: Եվ դուք դրանց առերեսվելու էք: Դուք պատկերացնո՞ւմ եք, որ Աստված չտա՝ շատ հեշտությանը, կես տարի հետո կարող է ամեն ինչ շրջված լինել: Վտանգները բավական խոշոր են: Ասենք, մեկը այն է, որ Թավշյա հեղափոխության անունից սկսել է հանդես գալ ուլտրաազգայնախայրենասիրությունը, և կարող է դա ահագնանալ, և կարող են այդպիսի ուժերը կուսակցություններ կազմել և հաղթել ընտրություններում, և մենք կհայտնվենք է՛լ ավելի տխուր վիճակում, քան ազգ-բանակի ժամանակ՝ այդ դեկլարատիվ կոչերի ժամանակ:

Մյուս վտանգն այն է, որ գեոքաղաքականությունից կախվածությունը... այդ նախորդ ասած վտանգը կարող է միավորվել այն ուժերին, որոնք ուզում են այստեղ քանդել իրադրությունը, և Ռուսաստանից շատ հստակ կարելի է տեսնել այդպիսի, փոքրիկ առայժմ, տենդենցներ:

Բայց երբորդ ու ամենագլխավոր վտանգը, իմ կարծիքով, տեսլականի բացակայությունն է, որ այժմ մեր հասարակությունը չունի: Մեր կառավարությունը ժամանակ չի գտնում, որովհետև նրանք ամենօրյա գործով են զբաղված և մեթոդներին չեն տիրապետում, որովհետև դա հեշտ չի՝ մեթոդներին տիրապետելը, երբ ստեղծել են պետություն, ինչպիսին որ այն կա, քիչ թե շատ: Բայց մյուս կողմից՝ սարսափելի, հնոտի և հաճախ սխալ հիմքերի վրա է այն: Եվ այդ պահին դու հազար ու մի ազդակի պիտի ռեակցիա տաս և դրան գումարած՝ դու պիտի ռազմավարության մասին լրջով մտածես: Չեն կարողանում, ժամանակ չկա: Մենք պիտի օգնենք. եթե հասարակությունը չօգնեց, եթե տեսլականը չձևավորվեց՝ շատ մեծ վտանգներ են սպասում մեր երկրին, մեր հասարակությանը: Բայց ես հավատով լեցուն եմ և՛ դեպի նոր սերունդները, և՛ դեպի հասարակությունը. տակից դուրս շատ անգամ ենք եկել, նորից տակից դուրս կգանք:

**Տերը քաղաքացին է. հիերարխիկ համակարգերը, բուրգային համակարգերը սկսում են տեղը զիջել ցանցային համակարգերին: Աշխարհի, կյանքի, գործունեության, հասարակության տերը մեզանից յուրաքանչյուրն է:**

Չկա «փսևդո»-ն այլևս. կա քննադատական մտածողությունը: «Փսևդո»-ները, «ֆառշերը», «տուֆտաները», ֆասադայինները միշտ սուտ են: Կարծրատիպերը միշտ սուտ են. չկա փսևդո-հեղինակություն, չկա փսևդոարժեք. դրանք միշտ սուտ են: Կան միայն իրական արժեքներ: Իսկ թե ինչպե՛ս հասնել, էդ փսևդոյի շորիկների միջից դուրս փորել իրականը, ինչպե՛ս համաստեղության միջից սկսել ուսումնասիրել կոնկրետ աստղը - դա արդեն հենց մեր դպրոցն էլ պիտի ձեզ օգնի: Բայց ինքներդ էլ փորձեք: Աշխարհը պարզ չէ, պարզունակ չէ՝ բարդ է, ամեն իրադրություն շատ բարդ է: «Հայ»-ը շատ բարդ հասկացություն է, «արժեք»-ը շատ բարդ հասկացություն է, «ազգ»-ը շատ բարդ հասկացություն է, իրենք պարզ չեն, «պատմություն»-ը բարդ հասկացություն է: Մեզ թվում է մենք պատմությունը գիտենք՝ մենք այն չգիտենք, որովհետև այն մեզ վերարտադրվել է փոքրիկ, ա՛յ, այսպիսի կտորներով, որ չգիտես՝ ո՞վ է գրել, ինչո՞ւ, ինչպե՞ս: **Բարդ է. բարդությունը պետք է կարողանալ ընկալել:**

**Ոչ թե արագ արդյունք, այլ համապարփակ, ինստիտուցիոնալ փոփոխություն:** Ոչ թե երկու հոգի հանդիպեցին, հաշտություն կնքեցին, սահմանը որոշեցին, ժողովրդի մի մասին քշեցին այս կողմ, մյուս մասին՝ այս կողմ, ու ոչ մեկը ծպտուն չհանեց իրենց հպատակներից, որովհետև իրենք էս եռանկյունիների գագաթներն էին. հիերարխիկ բուրգերը: Ոչ թե դա, այլ **ինստիտուցիոնալ, երկարատև, ռազմավարական, նպատակասլաց, պրոյեկտային, ամբողջ գիտության իմացության վրա հիմնված տեսական աշխատանք, փոփոխություն, բռնության մշակույթը, մարդուն ստորացնելու մշակույթը՝ այն, ինչ էս անվանում եմ «մահվան մշակույթ», մահացման մշակույթը դարձնել կենդանության մշակույթ, զարգացման մշակույթ, ստեղծագործության մշակույթ:** Ոչ մի պարզունակ ու հեշտ բան չկա, ոչ մի բանը միաֆունկցիոնալ չէ: Աթոռը միայն նստելու համար չէ: Մանավանդ՝ մարդը... Ամեն ինչ բազմաֆունկցիոնալ է:

**Լավ է լինել համագործակցող և կառուցողական: Փորձիր լինել համագործակցող և կառուցողական: Ավելորդ հպարտությունը, դա արդեն էդ պատվիրաններից մեկում կա, չէ՞, ավելորդ գոռոզամտությունը, ավելորդ ինքնահավանությունը՝ լինի քո սեփական անձի նկատմամբ, լինի քո ազգի նկատմամբ - պետք չի: Եղի՛ր կառուցողական, ինքնաքննադատ, քննադատական մտածողությամբ օժտված, ուրիշին զգացող, տեսնող և համագործակցությանը պատրաստ:**

Այս բոլոր խնդիրները մենք նաև կհետազոտենք վաղը, երբ կոնկրետ ֆասիլիտացիոն հմտությունների մասին խոսենք:

Վախ և ուժ: Շատ հաճախ Լևիաթանն իր իշխանությունը պաշտպանելու համար ինչ-որ արարք է անում, քանի որ իրականում վախենում է կորցնել իր իշխանությունը: Սովորաբար էստեղ (գագաթին) մի փոքրիկ մանկիկ է, մի ինչ-որ ասեղի պես՝ ագռավի փորում գտնվող ձվի մեջ, մի փոքրիկ, խեղճո կրակ երեխա է, որը սարսափելի վախենում է, որ իրեն զցելու են ու ոտներով սկսեն տշել, որ շատ հաճախ է տեղի ունենում. Ահա, Չաուշեսկուի և այլ դեպքերի պես: Դրա համար **ինքը ձեզ է վախացնում, մեզ է վախացնում: Ինքը ասում է. «Թույլ ենք մենք, չծնեցիք էրեխեք, ռազմական ուժ, միս չծնեցիք զինվորի համար: Մենք թույլ ենք, պետք է թույլ չտալ, որ մենք ազատ մտածենք, թույլ չտալ, որ թողնենք-գնանք աշխարհում սովորելու, պետք է թույլ չտալ, որ շատ բան իմանանք, իսկ դրա համար պետք է մեզ մի քիչ սոված պահել, որովհետև այլապես ես կկորցնեմ իշխանությունս»:** Վախը միշտ թուլության նշան է, և էդ, որ «պաշտպանություն» են ասում՝ միշտ վախին է առնչվում: Կարելի է պաշտպանվել՝ ուժից ելնելով. մենք ուժեղ ենք, մենք համաշխարհային ազգ ենք...

**Բայց էստեղ պետք է չընկնել էդ կարծրատիպերի գիրկը, որովհետև երկու մարդ, ինչպես ասում է չինական ճշմարտությունը, նույն բանն են ասում՝ բայց մեկը խաբում է, մյուսը ճիշտ է ասում:**

Հիմա. Նիկոլ Փաշինյանի դերը նաև դրա մեջ էր, որ նա վերակենդանացրեց դատարկ, արդեն դատարկված, կեղևը միայն մնացած շատ հասկացություններ, ինչպես, օրինակ, «հայրենասիրությունը», և այլն: Բայց նրանք շատ արագ կարող են էլի կարծրատիպանալ:

Տեսլականի մասին արդեն ասացի: Մի խոսքով շատ բաներ կախված են, կապված են լեզվի օգտագործման հետ. այ էդ՝ կառուցողակա՞ն, թե՞ գոեհիկ: Այ էդ՝ պրովոկատի՞վ, թե՞ համաձայնողական: Ու ոչ մի դեպքում ես չեմ խորհուրդ տալիս լինել միշտ համաձայնողական: Իզաբելլան ձեր հետ զրույցը սկսեց պրովոկացիաներից: Պրովոկատիվը շատ լավ, շատ կարևոր միջոց է, և շատ կարևոր է քննադատական մտածողությունը մտաբերելու համար: Եվ կան մի շարք այլ նման հանգույցներ, բայց ես ուզում եմ հիմա կանգ առնեմ, մի շարք այլ մոտեցումներ կամ կիրառուկներ, ինչպես ես եմ անվանում, որոնք օգնում են պարադիգմի փոփոխությունը տեսնել ու զգալ: Փորձե՛ք ինքներդ: Ասենք, ինչ-որ անհաջողություն ունեցաք. «Ընդունվում էի աշխատանքի՝ ինձ չընդունեցին»: Իսկ գուցե դա ավելի լա՞վ էր:

Պարադիգմի փոփոխությունը հայեցակետի փոփոխություն է նշանակում:

Իհարկե էստեղ էլ ես հենց որ ասում եմ՝ իսկույն դրա հակառակ դեպքն եմ հիշում: Դա «Ոսկե ցլիկի» այն խեղճուկրակ ինտիլիգենտն էր, որ ասում էր. «А может в этом великая сермяжная правда?», որ իրան հարևանները հավաքվել՝ ծեծում էին, որ ինքը զուգարանում լույսը չէր հանգցնում. այսինքն՝ ամեն ինչ իրա չափն ունի:

Մի բան էլ երևի. **սահմանը բաժանարար գիծ չէ, այլ կապի փարոս:** Որտեղո՞վ ես դու ուզում կապել նախ և առաջ: Շատ ավելի արժեքավոր է կապվել այստեղից այստեղ, տվյալ իրադրության մեջ՝ սա սահմանն է (բաժանված մասով), քան թե՛ այստեղ (հեշտ մասով): Ինչքան ավելի հեշտ է կապվելը, այնքան ավելի դա... իհարկե, շատ կարևոր է, շատ լավ է, բայց՝ քիչ արժեք ունի: Սահմանը ոչ թե բաժանարար գիծ է, այլ նշան, որ՝ կապը փորձիր այնտեղ զցել. կարթող դեպի այն կողմ՝ սահմանից այն կողմ գցիր:

Եվ՝ ոչ թե էգոիզմ՝ այլ՝ համաշխարհային օգուտ, ոչ թե քո ինքնության առաջին կեղևների առաջին մակարդակի համար՝ այլ՝ համաշխարհային օգուտ:

Այս թեզը գնում է լրիվ հակառակ մեր, էսպես կոչված, «եղունգ ունես՝ գլուխդ քորիր» իմաստությունը, մեր էդ, ուրեմն, քյասիբի, էդ բիրդան աղայի հոգեբանությանը: **Նախնական էգոիզմը, ինչպես և ագրեսիան, հեշ պարտադիր չի, որ հատուկ լինեն մարդկանց կենսաբանորեն: Ով որ ասում է, որ մարդը նման է կենդանուն... Ու ես սա ասում եմ որպես ոչ կրոնական, ոչ ռելիգիոզ թեզ: Ով որ ասում է, որ մարդը նման է կենդանուն՝ արդեն դեպի սխալ կարող է գնալ և՛ կենդանուն մեկնաբանելիս, և՛ մարդուն:**

Այսինքն, երբ մենք ասում ենք, չգիտեմ, «գայլերի օրենք» կամ «բնական ընտրություն» և այլն՝ այդ բոլոր հասկացությունները, որ եկան մեր հանճարեղ գիտնական Չարլզ Դարվինից<sup>37</sup>, հազար ութ հարյուր վաթսուամեկ թվին իր գիրքը տպած, որը ասեց. «Մարդը կապիկից է առաջացել»... Պետք է էդ ամեն ինչը ճիշտ հասկանալ, դա չի կարելի չափազանցնել:

Բոլոր դեպքերում **մեթոդաբանական սխալ է, եթե դու բարդը պարզով ես բացատրում:** Եթե դու ասում ես. «Քանի որ գայլերը գգում են ոչխարներին, ուրեմն մարդը ավելի լավ է գայլ լինի, քան ոչխար»՝ արդեն սխալ ուղղության մեջ ես, եթե դա, իհարկե, գեղեցիկ մետաֆոր չէ հանճարեղ պոետի կողմից օգտագործված: Նույն կերպ էլ գիտության մեջ. օրինակ՝ կոմպյուտերային գիտության մեջ շատ անհաջող վիճակ էր, մինչև բավական վերջերս, մինչև երեսուն-քառասուն տարի առաջ, որովհետև փորձում էին մարդուն... **Հակառակ ուղղությամբ էին գնում. սկզբում ստեղծեցին կոմպյուտերը, հետո փորձեցին մարդու ուղեղը հասկանալ ըստ նրա, թե ինչպե՞ս է աշխատում կոմպյուտերը: Դա միշտ սխալ է: Պիտի դու կոմպյուտերը հասկանալ ըստ նրա, թե ինչպես է մարդու ուղեղը աշխատում: Այսինքն՝ պարզը բարդով բացատրել կարելի է, բարդը պարզով՝ անհնարին է: Եվ արևմտյան գիտության խնդիրներից մեկը, ես որ ասում եմ, հենց դա է, որ պարբերաբար (և «արևմտյան» ասելով՝ ես ի վերջո համաշխարհայինը նկատի ունեմ) պարբերաբար դարեր շարունակ պարզով փոխարինել են բարդը: Ուսումնասիրել են միայն պատերազմը, փոխանակ խաղաղությունը ուսումնասիրեին, աշխարհը ուսումնասիրեին: Ուսումնասիրել են էդպես, ասենք, բիհեյվիորիզմով<sup>38</sup>, ասել են. «Մենք մեկ ա չենք հասկանալու՝ մարդու ներսում ինչ կա, եկեք իրան կտտենք էս կողմից, էս կողմից ինքը ձեն կհանի՝ կհասկանանք, ինչ ռեակցիա է տալիս ամեն կտտանքին»: Այ էդ փակ, «սև արկղի»<sup>39</sup> սկզբունքը և այլն: Էդ բոլոր մոտեցումները բավական ետ են գցել գիտությունը, բայց պարտադիր կամաց-կամաց հաղթանակում է՝ տրանսֆորմատիվ պարադիգմը: Հիմա շատ ավելի քիչ են տենց դեպքեր հանդիպում, և ավելի մասնակի են, ավելի մասնավոր են:**

Ասենք, գիտության մեջ. էն բոլոր գիտությունները, որոնք օգուտ կտան էս ամեն ինչը հասկանալուն՝ սկսում են միավորվել մի մետագիտության մեջ, որը, ասենք, արևմուտքում կոչվում է «cognitive science»: Ուրեմն, իմ ասած վերջին թեզը ամբողջացնող «մահվան», «մահացման» այդ խնդիրը. կան մեթոդաբանություններ, որոնք մահացնում են կենդանին, կենդանի աշխարհը: Կան մեթոդաբանություններ՝ որոնք կենդանացնում են և մարդկայնացնում են անկենդան աշխարհը: Եվ էս

<sup>37</sup> Darwinism: <https://en.wikipedia.org/wiki/Darwinism>

<sup>38</sup> Բիհեյվիորիզմ՝

<https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%AB%D5%B0%D5%A5%D5%B5%D5%BE%D5%AB%D5%B8%D6%80%D5%AB%D5%A6%D5%B4>

<sup>39</sup> Black box: [https://en.wikipedia.org/wiki/Black\\_box](https://en.wikipedia.org/wiki/Black_box)

երկրորդ մեթոդաբանությունները միշտ գիտականորեն ապացուցում են, որ ավելի ճիշտ են: **Վերջնականը, արտյուտը, իրարից տարաբաժանվածը, կարծր կողեր ունեցողը միշտ տեղը զիջում է խոսունին, հարաբերականին, փոփոխականին, բարդին:**

Եվ էլի վերջին այդ սեմինարի ժամանակ՝ արժեքաբանության, այդ թեզն էլ հնչեց, որովհետև... Մոտավորապես այսպիսի թեզ էր... Ես հիմա կարող եմ մի քիչ խառնեմ, բայց ինձ դա շատ դուր եկավ: Արա Նեդոյանն<sup>40</sup> էր, կարծեմ, որն ասաց, որ, ասենք, «նպատակ, արժեք, միջոց (մոտավորապես եմ ասում) հասկացությունները՝ ժամանակին նրանցից յուրաքանչյուրը մարդ է եղել»:

Մա ինչպե՞ս կարելի է հասկանալ: Երկու իմաստով: Մեկը մենք գիտենք. որ բոլոր հասկացությունները, կամ շատ ու շատ հասկացություններ, ասենք՝ քամին եղել է Աստված, հետո դարձել է երևոյթ: Ուրեմն՝ կարելի է շարունակել այդ թեզը զարգացնել և ասել, որ **միֆոլոգիական գիտակցության մեջ բոլոր հասկացությունները հոգի ունեն, գիտակցություն ունեն:** Աստվածն էլ ի վերջո մարդու գերադրական տարբերակն է, չէ՞:

Եվ իրենք փաստորեն էսպիսի մի... **Եթե ուրիշ տեսակետից նայես՝ ինչ-որ պահի իրենք եղել են մարդկային հարաբերություններից հանված հասկացություններ:** Մա շատ հետաքրքիր թեզ է. արդյոք կա՞ մարդկային հարաբերություններից դուրս և մարդկային հարաբերություններից բացի իրականություն:

Հենց էստեղ սկսում է արդեն, ավաղ, դեպի «գեշ անվերջությունը<sup>41</sup>» տանող խոսակցությունը, որովհետև պատասխաններ չկան:

Բայց սոցիալական գիտությունների մեջ միշտ շատ արժեքավոր է տեսնել, թե՛ ինչպիսին են մարդկային հարաբերությունները նախ և առաջ, թե՛ էդ գիտնականը ի՞նչ մշակութային թեզաուրուսից<sup>42</sup> է դուրս եկել: Որ ասում են, ասենք. «Արևմտյան գիտությունը չի հասկանում արևելյանին» կամ՝ որ «Տղամարդկային (մասկուլինային) գիտությունը չի հասկանում գենդերային մոտեցումները<sup>43</sup>». ի՞նչ են ուզում ասել: Ուզում են ասել, որ գիտնականի, կամ մտածողի, կամ պարզապես մարդու, գործողի մշակութային կառույցը, որը, որով հասարակությունը նրան կերտել է՝ թույլ չի տալիս, որ նա լինի ավելի օբյեկտիվ, քան այլ դեպքում կարող էր լինել:

Էսպես ես շատ կարող եմ խոսել. դուք արդեն բավական հոգնեցիք: Շնորհակալություն, վաղը կշարունակենք: Բայց եթե ունեք հարցեր և կոմենտարներ՝ խնդրեմ, մինչև հայտարարելը ընդմիջում:

*Մղազրությունը՝ Տաթևիկ Ղահրամանյանի*

*Մղազրության ավարտը՝ օգոստոսի 18, 2018թ.*

*Խմբագրության ավարտը՝ հոկտեմբերի 15, 2018թ.*

*Խմբագիր՝ Անի Թովմասյան*

<sup>40</sup> Ի՞նչ անեմ, թե՞ ինչպես անեմ. Արա Նեդոյան՝ <https://www.youtube.com/watch?v=Crp0NDC3MII>

<sup>41</sup> Միխայիլ Բախտին՝ <https://gtergab.com/hy/news/media/mikhail-bakhtin/65/>

<sup>42</sup> Արխայիկ մտածողություն. Մաս 1. Տեսլականը և նպատակը՝ քննադատական մտածողության անհրաժեշտ մաս (Jam Session 31)՝ [http://am.epfarmeria.am/archaic-thinking\\_part-1/](http://am.epfarmeria.am/archaic-thinking_part-1/)

<sup>43</sup> Academic Grievance Studies and the Corruption of Scholarship:

<https://areomagazine.com/2018/10/02/academic-grievance-studies-and-the-corruption-of-scholarship/>